2005, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (212)

Բրիտանիայի Հայոց Թերթ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Գէորգ Գ. ՉՈՐԵՔՃԻԱՆ
Կաթողիկոս Ամենայն Հայոց
(ծն. 1868, կթող. 1945-1954)

«Ամենայն ձորը լցցին,
եւ ամենայն լերինք եւ բլուրք խոնարհեսցին,
եւ եղիցին ամենայն դժուարինք ի դիւրինս
եւ առապարքն ի դաշտս: Եւ երեւեսցին փառք Տեառն, եւ տեսցէ ամենայն մարդ զփրկութիւն Աստուծոյ, զի Տէր խօսեցաւ»
(Ես. Խ 4-5)



Հայ ժողովուրդ, կար ժամանակ, երբ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն էլ բեզ նման ականատես եղաւ իւր հայրենիքի փառաւոր ու չէն քաղաքների աւերման, վկայ եղաւ հայրենի սրբութիւնների կոր-ծանման եւ ստիպուեցաւ թողնել իւր տունն ու տեղը, չուել օտար երկիր եւ պանդխտութեան մէջ հոգեմաշ ապրել՝ հայրենիքի կաթոտը սրտում:

Օտարութեան մէջ այդ տառապող ու վշտահար հրեայ ժողովրդի ականջին է, որ մարգարէի մելամաղձոտ րնարի լարերը յուսոյ անոյշ ձայնն են հնչեցնում. նրա ընկճուած հոգու մէջ է, որ մարգարէի յուսատու խօսքերը հայրենիքի վերաշինութեան կենսատու հաւատն են հաստատում:

Ի՜նչպէս քաղցր պիտի հնչէր մահամերձ ազգի ականջին վերակենդանութեան հաւատքով, կեանքով ու գործով դուք նմանվեք Ստեփանոս Նախավկայի, որ անվերապահորեն, առանց տատամսելու, առանց երկմտելու, առանց կասկածելու քրիստոնեական հաւատկանգնեց քրիստոնեական հաւատքի պաշտպանության համար – իր քի պաշտպանության համար – իր կեանքն ընծայաբերեց ի սեր Քրիստոսի:

Այսօր ժամանակները տարբեր են, բայց եկեղեցական համար միշտ էլ հատկանշող է այդ ոգին՝ հաւանեանության, գոհաբերության ոգին: Այսօր էլ տարբեր իրավիճակներ կան: Մեր եկեղեցիներում, ապրող մեր եկեղեցիների մեջ գործող, ապրող մեր եկեղեցիներ պետք ունի Ստեփանոս սարկավագի նման նվիրյալ սպասավորների, ովքեր ամբողջական կերպով իրենց կեանքը, իրենց անձը նվիրեն մեր եկեղեցու ծառայության գործին»,- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով եկեղեցու երիտասարդ սպասավորներին ա՛ջ-քի առ՝- միշտ ունենալ Սբ Ստեփանոսի հավատքի ամրությունն ու արիաբիրտ ոգին:

Նույն օրն Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց առաջնորդանիստ եկեղեցում 4 ուրարկիրներ, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանի, հընթացս Սբ Պատարագի ձեռնադրվեցին սարկավագ:

Տե՛ս էջ 3

ՅՈՅՍ Նոր Տարի

եւ փրկութեան այդ անոյշ ձայնը, եթէ այսօր էլ մի նոր մարգարէ հրապարակ գար եւ գիշերային աւետաբեր զանգակների 12 հարուածների հետ, որոնք աւետեցին աշխարհին հին տարուայ գլորումը եւ նորի կանգնումը, հայի վերակենդանութեան աւետիրը բերէր՝ յուսադրելով նրան, որ հին տարուայ հետ յաւիտեան մայր պիտի մտնի նրա վշտերի ու տառապանքների արեւը, եւ նոր տարու հետ պիտի ծագէ նրա երջանկութեան ու բախտի դէպի Բեթղեհեմ ընթացող փրկութեան աւետարեր լուսաւոր աստղը:

Յո՛յս, ի՜նչ մեծ ազգակ ես դու կեանքի. սակայն դու նոցա համար չես, որոնք միշտ բաված են աշխարհի ճոխ սեղանի առաջ ու պարերի, երգերի եւ ճուագների բաղցր օրօրներով յափշտակուած բանում են վայելքի մրուրը:

Յոյսը նիւթական կեանքի ճոխութեանմբ յափրացածների համար չէ, այլ նրանց, որոնք փորձրիկ ու խոնաւ խրճիթներում, միշտ չոր հացի ընկեր, դոների ու պատուհանների ճեղքերից սուրող ցուրտ բանուց դողդողալով ու զրնգզրնգալով, կանթեղի աղօտ լոյսի առաջ չոքած, աղօթքով ու արտասուքով աղերսում են Արարչին, որ բերեւուրիւն շնորհէ իրենց չարատանջ կեանքին: Յոյսը այն ազգերի համար չէ, որոնք, ապահնած հարստութեան եւ դժի, ագահ աչքերը յաբուն ոսկերի, ոչ ոսկերի՝ ամաչացած, նորայրները՝ սրախողխող, բոյրերը առեւանգուած ու հարեմ դրուած, մանկունը ողջակիզուած, իսկ մնացորդը՝ այսպէս կոչուած փրկութեան երկրում վտարանդի որդ, անպատսպար ու հիւծուած եւ մինչեւ իսկ, իբրեւ անարգ որդ, տրորուած:

Յոյսով ներշնչուած՝ տարիներ շարունակ մենք շատ դոներ բաղխեցինք. յանուն Քրիստոսի մի բաժակ պաղ ջուր աղերսեցինք մեր միրաւոր եղբայրների պապակած լեզուն զովացնելու համար, եւ սակայն ամենուսեր կորագոյուխ յետ դարձանք:

Շարունակությունը՝ էջ 2

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

19 դեկտեմբերի

Ձիովանի Գուայտային



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց իտալացի գիտնական եւ գրող Ձիովանի Գուայտային:

Շնորհավորելով այն Գուայտային «Ճիչ Արարատից. Սրմին Վեգները եւ հայերի ցեղասպանությունը» գրքի լույս ընծայման առիթով՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նրան՝ հայ ժողովրդի եւ Եկեղեցու հանդեպ տարբեր աշխատությունների միջոցով մշտապես դրսեւորվող հարգանքի եւ ավիրվածության համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առջեւ ծառայած խնդիրներին ու մարտահրավերներին, ներկայացվեց ներկայիս գործունեությունը:

23 դեկտեմբերի

Հնդկաստանի նորանշանակ դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հնդկաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռինա Պանդեին:

Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ուղղեց նորանշանակ դեսպանին՝ մաղթելով Աստծո օգնականությունն իր առաքելության մեջ: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ Մայր Աթոռի եւ Հնդկաստանի դեսպանատան միջեւ ձեւավորված ջերմ հարաբերություններին՝ գոհությամբ արձանագրելով, որ Մայր Աթոռի միաբանները դեսպանատան աջակցությամբ Հնդկաստանում հետեւում են լեզվական տարբեր դասընթացների:

Իր հերթին, դեսպանն ուրախություն հայտնեց դարերի պատմություն ունեցող Հայաստան երկիր նշանակվելու առիթով եւ վստահեցրեց, որ պիտի շարունակի գործացնել այն ջերմ կապերը, որ առկա են Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ ՀՅ-ում Հնդկաստանի դեսպանատան միջեւ:

Սբ Ստեփանոս Նախավկայի տոնը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Դեկտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Սբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի տոնը: Տոնի օրը Միածնաէջ Մայր տաճարում՝ Սբ Ստեփանոս խորանի առջեւ, մատուցվեց Սբ Պատարագ:

Ստեփանոս Նախավկայի հիշատակության օրը Հայոց Եկեղեցում համարվում է նա- սարկավագների տոն:

Սբ Պատարագից հետո Վեհարանում Մայր Աթոռի տարբեր կառույցներում իրենց ծառայությունը բերող 27 սարկավագներին իր հայրական օրհնությունը բերեց ու շնորհավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Ես հայցում եմ Երկնավորից, որպեսզի առատորեն հեղի ձեզ վրա Սուրբ Հոգու շնորհները, - ձեր հավատքով, կյանքով ու գործով դուք նմանվեք Ստեփանոս Նախավկային, որ անվերապահորեն, առանց տատամսելու, առանց երկմտելու, առանց կասկածելու

Տե՛ս էջ 3

Գէորգ Զ. Չորեքչյան
Կաթողիկոս Ամենայն Հայոց
(Ծն. 1868, կթող. 1945-1954)



ՅՈՅՍ
Նոր Տարի

Սկիզբը՝ էջ 1

Քրիստոնեայ Եւրոպայից գրուիլ հայ-ցեցինք, սակայն նա՝ մարդասէր ձեւացող այդ եսասէր Եւրոպան, դիւանագիտութեան ճաւիշ ապահոված ու աչերնե ամձնցեալ շահի փարոսին ուղղած, մեզ յետ մղեց ու մեր դահիճների գիրկը նետեց՝ անտարբեր դիտելով, թէ ինչպէս ենք խեղդուում արեան ու արտասուքի յորձանքի մէջ:

Եւ այժմ, երբ այդ ազգը յոգնած ու դալկացած ընկած է խաչի բեռան տակ եւ նայում Գողգոթայի վրայից դէպի յետ, դիտելով իւր կեանքի այս աղէտալի շրջանն ու խաչահան բազմութիւնը, միթէ յուսահատութեան զգացո՞ղմը պիտի համակէ նրան. ո՛չ երբեք:

Մի՞թէ առաջին անգամն է, որ բարձիտ մարդիկ փչէ պսակ են դնում հայ ճահատակ ժողովրդի գլխին. մի՞թէ առաջին անգամն է, որ հայի անմեղ արիւն է թափւում, եւ նրա միջնէն երկինքը հասնող հեծկլտոցները աշխարհի վրայ անլսելի մնում: Մի՞թէ այն ազգը, որ, Փրկչին ապահնած, դարեր շարունակ տառապանքի ոկվիսանի մէջ լողացել է, ու կենդանի մնացել, գեսի յորմանքներին պիտի գոհ երրայ. ո՛չ երբեք:

Չէ՞ որ կենդանի է Նա, որ դաշտի մէջ գրուած չոր ոսկորներին կենդանութիւն տուաւ եւ Իւր հզօր բազուկը մեկնելով նոր ազգ՝ Նոր Իսրայէլ կազմեց: Նա այսօր էլ հայ կեանքի անյուսութեան անապատում Իւր յուսատու եւ մխիթարիչ ձայնն է հնչեցնում. «Ամենայն ծորք լցցին, եւ ամենայն լեռինք եւ բլուրք խոնարհեսցին...»: Նա այսօր էլ, Մասիսի գլխին կանգնած եւ Իւր բազուկները տարածած, պահպանում է հայ երկիրը, օրինում հայ ազգը եւ պատրաստ է Իւր շուրջը փչել ու ճահատակ հայ ժողովրդի չորոսկորներին կենդանութիւն շնորհել, երէ նա ականջ դնէ Փրկչի յուսատու եւ մխիթարիչ ձայնին ու հաւատով ներշնչուած՝ անդրդ աշխատէ:

Տօներ են գալիս. թո՛ղ տօնեն ընտրեալ ազգերը, իսկ մենք՝ ընտրեցեալ ենք՝ ոսկորներ ենք դարձեալ մի ժողովուրդ, տօնելու փոխարէն անդրդ աշխատելու պարտք ունինք. կատարենք այդ պարտքը մեր հարազատ եղբայրների հանդէպ: Աշխատենք հաստատել մեր երկրում զօրեղ <...> եւ այն ժամանակ կ'անցնին արի, սովի եւ համաճարակի սեւ օրերն ու նրանց բացած վէրքերը կը բուժուին: Բայց երէ թողնենք, որ ժողովուրդը արիւնաքամ լինի եւ անօգնական մնալով ընկճուի անընդհատ հարուածների տակ, վախեցեմ, թէ այլեւս ոտքի ելնել չկարողանայ:

Ռուսահայ եղբայրներ, շատ ծանր ու պատասխանատու բաժին է ընկել մեզ՝ ժամանակակիցներիս: Հասկանանք, միմեանց ձեռ պարզենք ու անդադրում աշխատենք առանց լքանա: Խմբերը մեր դէմերը, մեր ազգի բոլոր բարոյական եւ նիւթական միջոցները հրապարակ բաշենք՝ վերածելու ինչ որ կորցրել ենք, վերաշինելու ինչ որ աւերել են: Ամօթ եւ նախատինք կը լինի մեզ, եթէ մեր տաճկահայ եղբայրների հոգեվարքին ականատես լինինք եւ չգլանք, որ նրա արեան հետ մեր իակ արիւնն է կաթիլ-կաթիլ ծորում, որ նրա վերջին շնչի հետ մեր վերջին շունչն էլ պիտի նլնէ, եւ հայ ազգը աշխարհիս երեսից պիտի ջնջուի իւր բոլոր բարձր ձգտումներով ու սուրբ գաղափարներով եւ անտարբեր նստենք:

Այսօր բաղաքացիական տարու ծնունդն է, սակայն նրա հետ ծնունդ է առնում մեզ կրօնական տարին. երէ առաջինը բերում է յոյս դէպի մեր ապագայ վերաշինութիւնը, երկրորդը հաւատ է ներշնչում եւ մեր ընթացնալիք ուղին գծում:

Աստուծոյ Որդին, երկնքից երկիր իջնելով, մտնում է աղքատութեան ու խոնարհութեան մսուրը՝ սովորեցնելով բշուառութեան ու հալածանքի մէջ անկում չտեսնել, դուրսը աշխարհի մեծերի մօտ, հանգիստ ու փառք չորոնել, այլ ի ներքուստ զօրանալ, հոգով եւ իմաստութեամբ զարգանալ եւ հաւատալ, որ այդ շնորհաց լուսով ակաչծող պատրոյգը երբեք չի շիջանի, եւ յիշելով Փրկչի յուսատու խօսքերը՝ Նրան ապահենել. «Եկա՛յք առ Իս, ամենայն վաստակեա՛լք եւ բեռնատրք, եւ Ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28):

Հա՛յ ժողովուրդ, նոր տարու առիւ բեզ ուրիշ բարեմաղթութիւն չունիմ անելու, բայց միայն ցանկալ, որ յոյսդ հաստատուն լինի բո ապագայ վերաշինութեան գկատմամբ, որ հաւատդ կենդանի մնայ բո ազգային գոյութեան նկատմամբ, եւ յուսով ու հաւատով զօրացած՝ եղբայրութեան ձեռ մեկնես հայ եղբայրներդ՝ սիրոյ գործեր կատարելու: Եւ այն ժամանակ «չնորհը եւ ողորմութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեանդ». ամէն:

1 յունուարի 1916 թ.

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵԿԵՂԵՑԻ

Սկիզբը՝ թիվ 11, 12, 15-18, 20-22

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Որոշ աղանդներ մերժում են մարդու բանական եւ անմահ հոգու գոյությունը՝ մոլորեցնելով նույնիսկ բանից անտեղյակ իրենց հետեւորդներին: Քրիստոսը խաչի վրա ավազակին ասաց. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես»: Հոգու անմահության մասին է վկայում նաեւ աղքատ Ղազարոսի առակը: Բայց եթե ոմանք դարձյալ չեն համոզվում, ապա հետեւյալը կասեցք: Նախկինում բժշկությունը մեռած էր համարում այն մարդուն, ում սիրտը կանգնում էր: Սինչդեռ այսօր բժիշկներն ավելի եռանդուն են գործում այն ժամանակ, երբ մարդու սիրտը դադարում է աշխատելուց՝ փորձելով հաջողորդ որպեսերի ընթացքում շտկել իրավիճակը: Այսօր այս վիճակի մեջ գտնված աշխարհի միլիոնավոր մարդիկ գարմանալի բաներ են պատմում:

Մեռելոցի օրը եկեղեցիներում մատուցվում է Սբ Պատարագ, որից հետո կատարվում է հոգեհանգստյան արարողություն: Արարողության ընթացքում քահանան ընթերցում է իրեն փոխանցված նեցեցյալների անունները եւ նրանց հարազատների հետ միասին աղոթում նրանց հոգիների փրկության համար: Քրիստոսը հարություն տվեց չորս օրվա մահացած Ղազարոսին: Ավանդությունն ասում է, որ դրանից հետո Ղազարոսն իր ողջ կյանքի ընթացքում այլեւս երբեք չփիծաղեց՝ հիշելով այն ամենը, ինչ տեսել էր մեռած ժամանակ: Ձեր նեցեցյալներն իրենց հիշատակի համար ձեր ողորմությունների եւ ձեր աղոթքների կարիքն ունեն: Ուրեմն, սիրելինե՛ր, եկեղեցի եկեք եւ աղոթեցեք ձեր նեցեցյալների հոգիների խաղաղության համար:

Եհովայի վկաները եւ Մորմոնները շատ զարմանալի տեսակետներ ունեն մարդու մահվան մասին: Եհովայի վկաներն իրենց հետեւողներին ամեն ջանքով փորձում են համոզել, որ մարդն անմահ հոգի չունի եւ մեռնելով ոչնչանում է, սակայն Աստված կարող է հետո նրան վերստեղծել: Իսկ Մորմոնները՝ երկնքի մոլորակները բաժանել են իրար միջեւ՝ ասելով, որ փրկված Մորմոնը դառնում է մի նոր աստված ու տեղափոխվում անծայրածիր տիեզերքի որեւէ մոլորակ, հիմք է դնում մի նոր քաղաքակրթության՝ դառնալով Ադամ այդ աշխարհի համար: Անշուշտ, անհեթեթ են նման տեսակետները, եւ պարզապես միամիտ աղանդավորներն են մոլորվում դրանցով: Իրականում Աստվածաշունչը հենց Ծնունդ գրքից մեռնողների մասին ասում է, որ նրանք գնացին ու միացան իրենց նախնիներին: Այսպես է ասվում Աբրահամի, Իսմայելի, Իսահակի, Հովսեփի եւ մյուսների համար, իսկ Մովսեսին Աստված Ինքն է ասում, որ երբ բարձրանա լեռը, այնտեղ պիտի մեռնի եւ միանա իր նախնիներին: Սա ցույց է տալիս, որ Հին Ուխտի վաղ ժամանակներում մարդիկ հանդեռձյալ կյանքի եւ հոգու անմահության հանդեպ մեծ հավատ ունեին:

Հոգու անմահության ապացույցներ

Որոշ աղանդներ չեն հավատում բանական հոգու գոյությանը կամ հոգու անմահությանը: Բայց Աստվածաշունչը, ընդհակառակը, հատկապես խոսում է այն մասին, որ մարդը մեռնելիս իր հոգին ամվանդում է Աստծո ձեռքը: Այդ իսկ պատճառով էլ Մովսեսն ու Ահարոնը, երեսնիվայր ընկնելով Աստծո առջեւ, Նրան ասացին. «Ո՛վ Աստված, *հոգիների ու բոլոր մարմինների* Աստված (Թվեր ԺԶ 22): Սաղմոսաց գրքում եւս Դավիթն ասում է. «Դու եւ պաշտպանն իմ, Տե՛ր, քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»: Քրիստոս եւս խաչի վրա բարձրանալիս աղաղակեց եւ ասաց. «Հա՛յր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին»: Նույն կերպ, երբ քարկոծում էին Ստեփանոս սարկավագին, նա աղոթում էր եւ ասում. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին»: Աբրահամի եւ Իսահակի մասին եւս գրված է, որ նրանք իրենց հոգիներն ավանդեցին ու մեռան երջանկի ծերության մեջ: Բացի այս վկայություններից, Հին Կտակարանում նաեւ նշվում է, որ Հուդայի անդրանիկ որդի Էրը, հետո էլ Մյուս որդին՝ Օնանը, հաճելի չթվալցին Տիրոջը, եւ Աստված առավ նրանց հոգիները: Նկատելի է, որ Աստվածաշունչը չի խոսում մարմնի հետ նաեւ հոգիներ ոչնչացման մասին, այլ շեշտում է հոգին Աստծուն ավանդելու կամ Աստծո կողմից հոգին առնելու մասին: Այսպիսին է նաեւ անմիտ մեծահարուստի մասին առակը, երբ նրան ասվում է. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»: Քրիստոսը, պատմելով աղքատ Ղազարոսի եւ մեծահարուստի մասին առակը, ասում է, որ մահից հետո Ղազարոսը գնաց Աբրահամի գոգը, իսկ մեծահարուստը գնաց դժոխք: Նաեւ խաչի վրա Քրիստոսն ավազակին ասաց. «Այսօր ինձ հետ դրախտում կլինես»: «Հոգին է կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող անել»,- ասում է Հովհաննես ավետարանիչը: «Որովհետեւ հոգին առավել է, քան կերակուրը»,- ասում է Մատթեոս ավետարանիչը: Քրիստոսն ավելի բացահայտ է ասում. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ դուք առավել վախեցե՛ք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին եւ մարմինը»: Ավետարաններում բացահայտ երեւում է, որ մահից հետո հոգին անջատվում է մարմնից: Այս է ապացուցում հատկապես Հայրոսի դստեր հարության պատմությունը: Քրիստոսը բռնեց նրա ձեռքից, գոչեց եւ ասաց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՛վ մանուկ»: Եվ նրա հոգին վերադարձավ,- ասում է ավետարանիչը,- եւ մանուկը իսկույն կանգնեց: Եվ Հիսուսը հրամայեց, որ նրան ուտելու բան տան: Եվ նրա ծնողները զարմացած մնացին: Նման պատմության հանդիպում ենք նաեւ «Գործք առաքելոց»-ում: Երբ Պողոս առաքյալի խոսելու ընթացքում եվտիքոս անունով պատանին ընկնում է պատուհանից եւ մեռնում, Պողոսը, ցած իջնելով, ընկնում է նրա վրա, նրան իր գիրկը վերցնում ու ասում. «Մի՛ խռովվեք, քանի որ սրա հոգին վրան է»: Աղանդավորներն ասում են, որ հոգին սովորական շունչն է, եւ ինչպե՞ս կարող է այդ շունչն ինքնուրույն գոյություն ունենալ: Սակայն իրականում հոգին անմահ Աստծո պատկերով է ստեղծված եւ բանականությամբ օժտված, եւ այն, որ հոգին սովորական շունչ չէ, ապացուցում է Պողոս առաքյալը: Թեսաղոնիկեցիներին ուղղված թղթում նա ասում է. «Խաղաղության Աստվածն Ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես, եւ ձեր ամբողջ հոգին, շունչը եւ մարմինը թող անարատ պահվի մինչեւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը (Ա Թեսաղ. Դ 23): Եվ այս բազում մեջբերումները ցանկանում ենք ավարտել Քրիստոսի խոսքերով. «Դուք չե՞ք կարդացել Մովսեսի գրքում՝ մորեներ դրվագում, թե ինչպես Աստված ասաց նրան. «Ե՛ս եմ,- ասում է,- Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը եւ Հակոբի Աստվածը»: Իսկ Աստված մեռելների Աստվածը չի, այլ՝ ողջերի. ուստի, դուք խիստ մոլորված եք»:

Շարունակելի

Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ



ՀԱՅՐՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ
(1019-1058)

Սկիզբը՝ 12-14, 22, 23

Անիի թագավորությունը մնացել էր կաթողիկոս Պետրոսի եւ Վեստ Սարգսի ու Գրիգոր Մագիստրոսի խնամակալությանը, իսկ Վահրամ Պահլավունին դեկավարում էր ռազմական ուժերը: Եթե եռյակի առաջին երկուսը բացահայտ բռնել էին դավաճանության ճանապարհը, ապա Գրիգոր Մագիստրոսը սին հույսեր էր փայփայում, թե Գագիկ Բ-ի առաքելությունը Կոստանդնուպոլիս հաջող ելք կունենա: Երբ նրա վերադարձը ձգձգվեց, նա անձամբ մեկնեց Կոստանդնուպոլիս՝ անցուցարձը պարզելու, եւ բոլոր հիմքերը կան կարծելու, որ նա բանալիների հանձնմանը մասնակցություն չէր ունեցել: Սակայն համոզվելով, որ Գագիկին այլեւս թույլ չեն տա վերադառնալ Անի, նա նույնպես ինչոր տեղ հայտնվեց դավաճանների հետ մի նստարանին՝ հանձնելով կայսրությանն իր հայրենի Բջնին, Կայանը եւ Կայծոնը շրջակա հողերով եւ կալվածքներ ստանալով Տարոնում եւ մտնելով բյուզանդական ծառայության մեջ՝ ստացավ Միջագետքի (իմա՝ Եփրատ եւ Արածանի գետերի ջրախառնուրդի շրջան - Բ. Հ.) եւ նրանից արեւելք ընկած երկրամասերի կուսակալությունը: Տեղեկություն է պահպանվել այն մասին, որ Գրիգոր Պահլավունին Կոստանդնուպոլսում հանդիպեց մահմեդական գիտուն Մանուելի հետ եւ Ավետարանի ու Ղուրանի համեմատության մասին վեճ ունեցավ՝ իր գիտելիքներով զարմացնելով վերջինիս:

Կոստանդին Ժ Մոնոմախոս կայսրը 1045 թվականին Հայաստան ուղարկեց Ասիտ զորավարին՝ հրաման տալով գրավել Անին: Այս նեթքինի զորավարը, որ հայտնի է նաեւ կատաղան եւ պարակոմանս պաշտոնները, անհաջողության հանդիպեց Վահրամ Պահլավունու հետ ունեցած կռիվներում եւ ստիպված եղավ քաշվել դեպի Ուղիթք եւ Կարին: Սակայն Անի հասնող լուրերը՝ Գագիկ Բ-ի տեղի տալու մասին, հուսահատեցրին ժողովրդին: Դրան գումարվեց նաեւ Գրիգոր Պահլավունու բռնած դիրքը: Մի պահ անգամ կամեցաց ազատություն հանձնել Դավիթ Անհողինին կամ ափիպազաց թագավոր Բագարատին, սակայն Պետրոս կաթողիկոսի ազգադավ գործունեության պատճառով որոշեցին հպատակվել բյուզանդացիներին: Հայոց թագավորների գերեզմանների վրա սգո երեք արարողություն կատարեցին, անիծեցին Գագիկին դավաճանողներին եւ լուր ուղարկեցին Անտիոխ, որ Անին հանձնում են նրան: Հուսահատ եղած Վահրամ Պահլավունին նույնպես ենթարկվեց դրան: Անին հանձնվեց բյուզանդացիներին հայոց 493 թվականին կամ 1045 թվականին՝ գարնան կողմերը:

Ասիտը, ինչպես եւ սպասելի էր, մեծ պատիվներ տվեց Պետրոս կաթողիկոսին՝ մի տեսակ հատուցելով նրան ստոր դավաճանության համար: Անկախ որոշ ուսումնասիրողների՝ նրան արդարացնելու փորձերից՝ թե կաթողիկոսի գործելակերպը մեծապես պայմանավորված էր սելջուկյան պետության հզորացումով, եւ կաթողիկոսը բյուզանդական տիրապետության մեջ էր տեսնում երկրի ապագա ապահովությունը, նրա դավաճանությունը ոչ մի արդարացում չունի: Անիի թագավորությունն իրեն ենթակա թագավորություններով եւ իշխանություններով դեռեւս պատկառելի ուժ էր ներկայացնում, եւ բնավ պետք չէր ամեն ինչ անել՝ այն կործանելու համար: Վեստ Սարգիսը, որ հույս ուներ բյուզանդացիների հովանավորության տակ թագավորել երկրում, ոչինչ չստացավ, եւ պատմությունը լռում է նրա մասին: Նա իր՝ դավաճանի դերը կատարել էր եւ անգամ բյուզանդացիներին պետք չէր: Այնպես որ, Ասիտին որպես կուսակալ շուտով փոխարինեց Կամենասը: Գրիգոր Պահլավունին, որ համագործակցելով բյուզանդացիների հետ, մեծ պատիվների էր արժանացել, իր խիղճն արդարացնելու եւ հեղինակությունը փրկելու համար հայտարարում էր, որ Գագիկ Բ-ն մեղավոր է Կոստանդնուպոլիս գնալու համար, իսկ եթե գնացել էր, ապա չպետք է համաձայներ փոխանակությանը: Վահրամ Պահլավունին մնաց հայոց սպարապետ եւ կայսրությանը ենթակա հայկական գնդերի հրամանատար: Սակայն նրան էլ երկար չէր մնացել ապրելու: 1045 թ. աշնանը Դվինի Ապուսվար ամիրայի դեմ ձեռնարկված արշավանքի ժամանակ նա սպանվեց իր Գրիգոր որդու հետ միասին: Կարծես թե ծերունի սպարապետը Հայոց թագավորության անկումից հետո անիմաստ էր համարել իր ապրելը եւ իր մահկանացուն կնքել էր ռազմի դաշտում:

Պետրոս Գետադարձն է: Ավելին, նա հասավ այն բանին, որ Մոնոմախոս կայսեր հրամանով Գրիգորիկոսին ստիպեցին տեղափոխվել Արծն, իրորդություն, որ շատերին ուրախություն պատճառեց: Կաթողիկոսի խաբկանքով Արծն տեղափոխվելը տեղի ունեցավ հավանաբար 1046 թվականի վերջերին:

Արծնը, սակայն, կաթողիկոսանիստ չդարձավ, պարզապես այն միջոց էր Պետրոս Գետադարձին հեռացնելու Անիից:

Այստեղ՝ Եփրատի վերնահոսանքում, նա կատարում է ջրօրհնեքի արարողությունն այնպիսի փառավորությամբ, որ մյուռոնթափի ժամանակ մի մահմեդական, հավանաբար արաբ, խնդրում է նրան իրեն քրիստոնյա մկրտել: Սակայն մկրտության ժամանակ անգգուշորեն մյուռոնի շիշը կոտրում է, որի հետեւանքով մյուռոնն առատորեն թափվում է մկրտյալի վրա եւ ջրի մեջ: Զարդված ապահոս մի կտոր վնասում է կաթողիկոսի ձեռքը՝ առաջ բերելով ուժեղ արնահոսություն: Եղածը մի առանձին բան չէր, սակայն ծանր տպավորություն թողեց ժողովրդի վրա, որն այն բարի նշան չհամարեց:

Շարունակությունը՝ էջ 5

ՈՒԽՏ, ՈՒԽՏԱԼՂՆԼՔՈՒԹՅՈՒՆ, ՈՒԽՏԱԼՎՈՐ

Դեռեւս վաղնջական ժամանակներից մեզ ծանոթ է «ուխտ» բառը. այն հիշեցնում է շատ խորհրդավոր պատմություններ՝ Հին Կտակարանից սկսյալ: «Ուխտ» բառը արտահայտելիս ապրում ես մի այնպիսի հոգեվիճակ, որպես թե մի պահ անջատվում ես կյանքից եւ մուտք գործում այն աշխարհը, ուր հավիտենական է կյանքը: Ուխտ արդեն իսկ նշանակում է կապ Աստծո հետ՝ զգացում, որ տանում է Աստծո ճանաչողության, հոգեվիճակ, որ պարուրում է Աստծո հետ: «Ուխտ» բառն ամբողջությամբ հանձնիչ է «հայ» բառին, քանի որ հայ ժողովուրդը ողջ իր պատմության ուղիներում եղել է պանդուխտ, ուխտավոր ազգ: Ուխտն այնպիսի մի հոգեվիճակ է, որ դարերի ընթացքում ապրել է հայ ժողովուրդը ինքնատիրապետման, ազգապահպանման, լեզվապահպանման, բազմադարյա հոգեւոր արժեքների պահպանման ուղիներում: Անշուշտ, այս ամենի պահպանումն է եղել Աստծո նախախնամությունը: Ուխտի մի ուղի է, որ պետք է անցնի յուրաքանչյուրը որ: Ուխտը դաշինք է, հանձնառություն, երդում, խոստում, տառապանք, հաղթանակի եւ նվաճման իրավունք, Քրիստոսի հայելու առջեւ հոգին նորոգելու ցանկություն: Մարդ արարածն է ուխտավորը, եւ ուխտավորությունը մարդու կարողությունն է տեղափոխվելու, շարժվելու, առաջանալու դեպի սուրբ վայրերը, եւ որով ուխտավորը իր անձի համար ապահովում է մի հոգեւոր շահ, հոգու վերազտնում: Ուխտագնացությունն էլ խորքի մեջ այս ամենն իրականացնելու միջոցն է, այսինքն՝ հոգու աչքերը ուղիղ եւ շիտակ հայացքով առ Աստված: Մարդ արարածը դեռեւս լիովին չուսումնասիրված, չբացահայտված էակ է աշխարհիկ կյանքում, սակայն լիովին հետազոտված եւ ամբացատրելիորեն ուսումնասիրված էակ է ամենակալ Արարչի կողմից: Երբեմն մարդն անենպատակ է բայլում կյանքում՝ ինքն իրեն վերազտնելու, վերանորոգելու համար էլ է բայլում, բայլում է հաճախ իր անձի մեջ մի նոր անձ գտնելու նպատակով: Եվ այս ամենն ուղղակի ճանփորդություն է, սակայն երբ այդ ճանփորդությունը կատարվում է նպատակային՝ գերազանցության, կատարելության հասնելու համար, ապա այն դառնում է ուխտ: Իսկ երբ ուխտավոր ես, ապա ճանփորդությունդ վերածվում է ուխտագնացության: Սա այն զգացումն է, երբ ներքին մղման ճանփորդությունը միաձուլ է ֆիզիկական ճանփորդության, անհասանելիին, անտեսանելիին հասնելու համար, որն անվանվում է հոգեւոր ուղեւորություն: Կարելի է ասել, որ հայ քրիստոնյայի, պանդուխտ հայ ժողովրդի ողջ կյանքն անցել է ուղեւորությունների: Յուրաքանչյուր հայ քրիստոնյա բաջ գիտակցում է, որ իր կյանքը չի բավականանվում այս աշխարհի մեջ, եւ հրաչալի գիտի, որ իր ճանփան եկեղեցու միջոցով է ընթանում դեպի երկնային Երուսաղեմ քաղաքը: Մարդ արարածը երկնային թագավորությանը հասնելու ճանապարհին մի ուխտավոր է, եւ իր ուխտագնացությունը



մշտնջենական եւ հավիտենական պահում է իրեն երդման, դաշինքին, Ամենաբարձրյալին հասնելու զգացման մեջ: Ինչ սուրբ եւ ասստվածային զգացում են պարզեւում մեզ «ուխտ», «ուխտավոր», «ուխտագնացություն», «ուխտավորություն» բառերը եւ ինչ անքակտելի են կապում մեզ մեր արմատներին: Տա Աստված, որ յուրաքանչյուր պանդուխտ հայիս համար ամենասուրբ ուխտատեղին լիցի եւ մնա հավիտենական Միածնի իջնելու վայրը, որ տեսիլքով հայտնվեց սուրբ Գրիգոր Լուսավորչին:

Եղիր եւ մնա՝ հավատարիմ Աստծուն, ուխտի՝ ժողովուրդ:

Արման ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տե՛ս էջ 1

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ՅՈՒՅԱԳՐԵՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ՆԿԱՐՆԵՐ

Հայոց գիրերու գիւտի 1600-ամեակի առիթով 15 դեկտեմբեր տեղի ունեցաւ 17-էն 19-րդ դարերու հայ կրօնական արուեստի վերանորոգուած նկարներու ցուցահանդէս մը: Ցուցադրութիւնը տեղադրուած էր Երուսաղէմի Հայ Պատրիարքարանի մուտքի գաւիթին պատերուն վրայ:

Վերանորոգման ծրագիրը մէկ տարի առաջ ձեռնարկուած էր Թէլ Ավիւ գտնուող Արուեստի ուսումնարան-աշխատանոցի ուսանողներու կողմէ՝ տեսչութեամբ Տոքթորա Իլանա Ռիֆքօ-Կոլտինկի:

Վերանորոգուած նկարները կը ներկայացնէին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ծնունդը, Առաջին բանտը եւ Վերջին ընթրիքը, գոյգ սուրբ Յակոբները, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը եւ Գիւտ Սուրբ Խաչի սուրբ Յակոբեանը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը եւ Գիւտ Սուրբ Խաչի տեսարանը: Իւրաքանչիւր նկարի կից կայի վերանորոգման ընթացքը բացայայտող լուսանկարներ: Նաեւ ցուցադրուած էր վերաբերեալ 19-րդ դարու ոսկեգօծ Պատրիարքական գահ մը:

Միջոցառման ներկայ գտնուեցան Տ. Թորգոմ արք. Մանուկեան, Երուսաղէմի հայ Պատրիարքը՝ ընկերակցութեամբ Սրբոց Յակոբեանց միաբանութեան հոգեւոր հայրերու, սուրբ քաղաքի կրօնական պետերու եւ այլ հասուտատութեան ներկայացուցիչներու:

Ի Տեր հանգաւ Տ. Գրիգոր քահանա Փանոսյանը

Յաւվով տեղեկացնում ենք, որ դեկտեմբերի 17-ին ի Տեր հանգաւ Հայ Եկեղեցու երիցագույն քահանաներից Տ. Գրիգոր քահանա Փանոսյանը: Դեկտեմբերի 19-ին Սբ Հողակաթի վանքում տեղի ունեցաւ հանգուցյալ տեր հոր վերջին օծման եւ հուղարկավորության արարողությունները:

Հոգեւոր տեր հայրը ծնվել է 1917 թ. Իրանում եւ երկար տարիներ ուսուցանել է Իրանի հայկական հայկական դպրոցներում, ապա 1968 թ. ձեռնադրվել է քահանա: Հայրենադարձվելով՝ 1974 թ. ի վեր, իբրեւ ծխական քահանա, ծառայել է Էջմիածնի Սբ Հոգակաթ վանքում:

Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Սկիզբը՝ թիվ 22, 23

ՏԱՂ ՍԻՐՈ

Սիրո կրակն այրել է նաեւ Հովհաննես Երզնկացու սիրտը: Այս տեսակետից սիրային մի հետաքրքրական պատմություն է «Տաղ Երզնկացի Յովանիսի ասցեալ» գործը (128 տող): Սինչեւ սիրո հանդիպելը նա իրեն անխախտ վեմ է կարծել, որ հիմա հալչում է, ինչպես ջուր: Եվ այս ամենը աղջկա շքեղ երեկայությամբ.

Եկաւ, անցաւ ու ծոխ քայլեց,
Ծոծաց ու զմէջքդն կոտրտեց,
Դարձաւ ի յետ խոյոր հայեց,
Անձրս տեսաւ ու զահրնեց:

Ինքն իր հոգեւոր գործերի մեջ է, որ բուրվառը ձեռքին վայր էր իջնում, «Թ՝ երթամ հասնիմ ճաշու ժամի» եւ հանկարծ սիրո այդ շքեղ, իրեղեն կայծակը խփում է նրան: «Աղջիկը աչքեր ուներ «Թաւվէզտանի», իսկ հոնքերը խելքն են տանում: Աղջիկը խնձոր է նետում, որ մնում է անարձագանք, երկրորդ խնձորը վերցնում է, եւ գեղեցկուհին՝ անունը Աշա, խոսում է: «Ես մուսուլման, մոլլայի աղջիկ...» եւ վերջում ավելացնում է. «Զիրար տիրեմք խաւշ կու լինի»: Հովհաննեսի մայրը վերին վանքերից իջնում, խուսկ ու մոմ է խոստանում աբեղաներին ու սարկավագներին, որ տղային փրկի, բայց իզուր, որովհետեւ Հովհաննեսին էլ ճար չկար: Մայրը տագնապների մեջ է.

- Ծո՛ղ Յովաննես, ծո՛ղ իմ տղեայ,
Դարձիր ի տուն, ասա մեղա՛յ,
Յոն քո տէրտէրը կու ճորայ,
Թ՝ Աշան ընկեր է հետ նորայ:

Մայրը որդուն նախատում է, հորդորում՝ մեղա գալ եւ տուն վերադառնալ, խոստանում է ամուսնացնել հայ աղջկա հետ, բայց նրա սիրտը թուն է կպել Աշային, քանի որ նրա նմանը չկա, եւ ինքը նրան չի ուրանա: «Աշան տաճիկ է անաւէրն», - շարունակում է մայրը, իսկ տղան շարունակում է սքանչանալ եւ գովել. «Մեջքըն բարակ գէտ Ֆռանկի»: Ճաշակը նուրբ է՝ եվրոպական գեղեցկության չափանիշով:

Աղջկան էլ հայրն է ծեծում ու նախատում՝ «Թ՝ էր կու սիրես հայու որդին»: Այս լսելով՝ Հովհաննեսը գնում է Երզնկա, կանգնում խանի առջեւ: Բայց Աշան պայման է դնում՝ նախ մզկիթ մտնել, հետո միայն իրեն տիրանալ: Հովհաննեսը մերժում է այս առաջարկը, որից հետո աղջիկն է դարձի գալիս եւ ասում.

Գնա, շիւէ եկեղեցի,
Որ գամ մտնէմ դուռ կոշկնով,
Պակ դնեն ու զմեզ ապրնեն,
Թող քո սրտի կամքն լինայ:

Շարժուն, կենսուրախ, սրամիտ երկխոսություններով ու անցումներով հարուստ մի ստեղծագործություն է սա, որի մեջ ուրվագծվում են եւ՝ կերպարներ, եւ՝ հետաքրքրաշարժ դիպաշար, եւ՝ ընտանիք-որդի-տարբեր կրոնների ներկայացուցիչներ հոգեբանական անցումներ ու տեսարաններ: Իր բովանդակությամբ սա եզակի գործ է հայ միջնադարյան տաղերգության մեջ, որովհետեւ հայ եւ տաճիկ հարաբերությունները սիրային կտրվածքով դուրս են եղել գեղարվեստական հայացքի տեսադաշտից:

ՀԱՅՐԵՆԵՐԸ

Հովհաննես Երզնկացու անվամբ հրապարակվել է 73 հայրեն: Սկզբիցեւեթ ասենք, որ նրա անվամբ հրատարակած հայրենների մեջ կան այնպիսիներ, որոնք վերագրվում են նաեւ Ֆրիկին եւ այլոց: Այդ հիշատակումները կանենք համապատասխան տեղերում:

13-րդ դարում հայրենը՝ որպես գրական տեսակ, արդեն լայն շրջանառության մեջ էր: Ճիշտ է, ավելի ուշ պետք է գային հայրենի ծաղկման ժամանակները, բայց այս շրջանում արդեն հստակորեն ճշտվում են բանաստեղծության այդ տեսակի ձեւական ու բովանդակային սահմանները:

Հովհաննես Երզնկացին որոշակի վերաբերմունք է ունեցել գրական այդ տեսակի հանդեպ: Հայրեններից մեկն սկսվում է հենց այդպիսի տողով. «Կաֆա մի ասել կամմ, որ արժժ շաւհար մի բոլոր...»:

Հովհաննես Երզնկացու հայրենները գրված են 14-15-16 վանկանի տողերով, որոնց մեջ հստակ ուրվագծվում են կիսատողերը: Դրանք բոլորն էլ ունեն միաձայն հանգավորում՝ *ասաա:*

Հայրենների նյութը Սուրբ Գրքի տարբեր մտքերն ու ասույթներն են, իր դիտարկումներն են մարդու բարոյական կերպարի առնչությամբ:

Նա յուրովի քարոզում է խոսքի մարգարիտները խոզերի առջեւ չթափել, որովհետեւ կորուսյալ ժամանակների մեջ «Մարդ չըկայ որ գէլվըն ճանչէ», այսինքն՝ մարդ չկա, որ ճանապարհի ցույց տա, որ ելքը իմանա: Այդ իսկ պատճառով՝ «Ճամփորդ քեզ յայնժամ ասեմ, որ զճամփի հատըն գիտտեաս...»: Խոսքը ձեռք է բերում փիլիսոփայական խորք՝ ծնունդ տալով ճանապարհ - կյանքի ճանապարհ - կյանքի անցողիկություն ուրվագծող այս տողերին.

Ճամփորդ քեզ այնժամ ասեմ, որ զճամփի հատըն գիտտեաս,
Ծընել ես՝ ի աշխարհի եկել, տուր խապար, թէ ուստի՞ կու գաս,
Եկել ես աւտար յերկիր, մէկ ցուցու, թէ ի՞նչ կու կենաս,
Մեռնիս դու՝ ի հող մընտիս, մէկ ասա, թէ ո՞ղր կու գնաս:

Ճանապարհի գաղափարը հիմնավոր նստած է Երզնկացու փիլիսոփայության մեջ: Իր կյանքի ճանապարհը զարմացած անցնողին նա իմաստության դասեր է տալիս, իրար բերում մանկության սկիզբն ու ծերության վերջը եւ գրում.

Դու զքզեզ ճամփորդ գիտես՝ ւ ի ճամփէդ ի դուրս կու գընաս,
Սիրես մանկութեան անունն ու նըսեփ մանկան չուներնաս,
Ճամփա է բարակ ու նեղ, դու խընդել ես գայլդ ու գնաս,
Քաղդր է մանկութեան անունն, դու լեղի՝ ւ անհամ՝ կու կենաս:

Աշխարհի անցողիկությանն ու ունայնությանը Երզնկացին հակադրում է եղբայրության ու միասնության ուժը՝ այդ կապակցությամբ գրելով այս գեղեցիկ հայրենը.

Ձեր գալդ է բարի, եղբայրք, որ ի յայս տեղիքս էք եկել,
Յաշխարհս ենք տրրտում ամենքս ու խոցով մեր սիրտս է լքցվել,
Ձեր խաւաքը մեզ դեղ եղաւ, ձեր տեսակդ ենք մենք խընդացել,
Հազար երնեկ այս աւուրս, որ մէկ տեղ ենք մենք ժողովել:

Տեր ու ծառայի հարցին է անդրադառնում եւ ի՝ սարդում. «Ողորդ դատաստան արէք, գի ձեզ պէս ատեն կա պահել»: Ապա դիմում է իշխողներին՝ զրկված մարդիկ ձեզ են դիմում. «Դընէք միտ ու դատ արէք, զէդ աստուած են ամ ձեզ եկել»:

Շարունակությունը՝ էջ 7



ՄԱՐԿՈՍ ՀԱԳԵԱՎՈՐ

(Ե դար)

Սկիզբը՝ թիվ 22, 23

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՆՎԵՑ ԽՈՍՔ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ, ԹԵ ԳՈՐԾԵՐՈՎ ԵՆ ԱՐԴԱՐԱՆՈՒՄ

71. Առանց ամպի անձրև չի գա, իսկ մենք չենք կարող շահել Ասփծո հաճությունն առանց մաքուր խղճմտանքի:

72. Մի՛ մերժիր ուսումը, թեկուզ շատ խելացի լինես: Որովհետև ինչ որ Ասփված է պատրաստում, ավելի արժեքավոր է, քան մեր սեփական խելքը:

73. Երբ որևէ զգայական հաճույքի պատճառով սիրտը շեղվում է ճգնողական վարքից, դժվար է լինում այն կառավարելը, ինչպես զաբիվայում գտնից շարժված մի ծանր քար:

74. Ինչպես հորթն է արածելու ժամանակ խոտ փնտրելիս հայտնվում վիհով շրջապատված կարկառի կատարին, այդպես էլ հոգին է ասփհանարար խոտորվում իր խորհուրդներով:

75. Երբ միտքը, Տիրոջով կատարելապես հասունանալով, հոգին գալարում է երկարժամանակյա նախարամադրվածության պատճառով, ասես գեղարևի մեջ սիրտը չարչարվում է, քանի որ միտքն ու կիրքը նրան փարբեր ուղղություններով են քաշում:

76. Ինչպես նավաստիները շահի հույսով ուրախությամբ են դիմանում արևի կիզիչ ջերմությանը, այդպես էլ նրանք, ովքեր ապում են չարությունը, ուրախությամբ են ընդունում կշտամբանքը: Եթե առաջինները պայքարում են քամիների հետ, վերջինները՝ կրքերի:

77. Ինչպես ձմռանը կամ շաբաթ օրը եղած փախուստն է (Մատթ. ԻԴ 20) տանջանք պատճառում մարմնին և ապականում հոգին, այդպես էլ վարվում է կրքերի արթնացումը փարիքն առած մարմնի և իրեն [Ասփծուն] ավիրաբերած հոգու մեջ:

78. Ոչ թե այնպես բարի և ողորմած չէ, ինչպես Տերը, բայց նույնիսկ Նա չի ներում զղջացողին:

79. Մեզվից շատերն են ցավ ապրում իրենց մեղքերի համար, սակայն ուրախությամբ են ընդունում դրանց դրդապարձառները:

80. Հողը փորփրող խլուրդը կույր է, ուստի չի կարող ապրելը դեսնեմ, և ով ժամանակավոր բաներում Ասփծուն չի ապավինում, Նրան չի ապավիսի նաև հավիրտենականներում:

81. Իրական գիտությունը Ասփծուց գրվել է մարդկանց իբրև մի շնորհ, որ նախորդում է լիակատար շնորհին. այն սովորեցնում է նրանց, ովքեր իրեն հաղորդակից են դառնում, ամեն ինչից առավել հավատալ Ինչին:

82. Երբ մեղավոր հոգին մերժում է ընդունել իրեն պատահող վշտերը, հիշչպակերն ասում են. «Բեժշկեցինք Բաբելոնին, բայց չբժշկվեց» (Երեմ. ԾԱ 9):

83. Երբ միտքը մոռանում է իրական գիտությունը, սկսում է պայքարել մարդկանց հետ վնասակար բաների համար՝ կարծելով, թե դրանք օգտակար են:

84. Կրակը չի կարող երկար մնալ ջրում, և ամոթալի խորհուրդը՝ Ասփծուն սիրող սրտում. որովհետև Ասփծուն սիրող ամեն ոք ուրախությամբ է տանջվում, իսկ ըստ բնության՝ կամավոր կանջանքը զգայական հաճույքի թշնամին է:

85. Այն կիրքը, որ մեր ազատ կամքով թույլ ենք տալիս, որ գործի մեր մեջ, հետո մեր կամքին հակառակ բռնանում է մեզ վրա:

86. Մենք սիրում ենք ակամա (ոչ կամավոր) խորհուրդների դրդապարձառները, և սա է պատճառը, որ այդ խորհուրդներն այդերում են մեզ: Իսկ ինչ վերաբերում է կամավոր խորհուրդներին, մենք վստահաբար սիրում ենք ոչ միայն դրանց դրդապարձառները, այլև այն առարկաները, որոնց հետ նրանք կապված են:

87. Գոռոզությունն ու պարծենկոտությունը ասպվածհայհոյության պատճառներ են, իսկ ընչաստիրությունն ու անձնահաճությունը՝ դաժանության և կեղծավորության:

88. Երբ չարը տեսնում է, որ մեր միտքը սրտանց է աղոթում, նրբին փորձություններով հզոր հարձակվում է անցնում: Սակայն փոքր անաբիծությունները ոչնչացնելու համար նա չի անհանգստացնում նման հզոր հարձակումներով:

89. Երբ մի խորհուրդ երկար է մնում մարդու մեջ, սա ցույց է գալիս այդ մարդու կապվածությունը դրան, իսկ երբ այն արագապես է ոչնչացվում, սա ցույց է տալիս այդ մարդու դիմադրությունն ու թշնամությունն այդ խորհրդի հանդեպ:

90. Միտքը մեկից մյուսն է փոխվում մտքվոր երեք տարբեր վիճակների մեջ, որոնք են բնության համաձայն, բնությունից վեր և բնությանը հակառակ վիճակները: Երբ այն հայտնվում է բնության համաձայն վիճակի մեջ, տեսնում է, որ ինքն է չար խորհուրդների պատճառը, և իր մեղքերը խոստովանում է Ասփծուն՝ լավ հասկանալով կրքերի պատճառները: Երբ այն բնությանը հակառակ վիճակում է, մոռանում է Ասփծո արդարությունը և պայքարում մարդկանց հետ՝ համարելով, թե իր դեմ անարդարություն է գործվում: Իսկ երբ այն բարձրանում է բնությունից վեր վիճակին, տեսնում է Սուրբ Հոգու պտուղները՝ սեր, ուրախություն, խաղաղություն և առաքյալի նշած մյուս պտուղները (Գաղ. Ե 22), և գիտի, որ եթե նախապատվությունը մարմնական հոգեբրին կա, այս վիճակում չի կարողանա մնալ: Այս վիճակից հեռացող միտքը մեղքի և նրա բոլոր սարսափելի հետևանքների մեջ է ընկնում, եթե ոչ անմիջապես, ապա՝ պատշաճ ժամանակին, ինչպես կորոշի Ասփծո արդարությունը:

91. Ցուրաքանչյուր մարդու գիտությունն իրական է այնքանով, որքանով այն կնքված է հեզությամբ, խոնարհությամբ և սիրով:

92. Ուղղափառ մկրտություն սպացած ամեն անձ խորհրդական կերպով ընդունել է ամբողջական շնորհը, սակայն այս շնորհի գիտակցում է միայն այնքանով, որքանով գործնականորեն պահում է պատվիրանները:

Շարունակությունը՝ էջ 7

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝
Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ճառը Թովմասի անհավատության մասին



Կա դարձյալ տոն է, ահա դարձյալ փոկություն է հոգիների: Այսօր վայելուչ կերպով մեզ եւ ընծայում այս խոսքը՝ ե՛ւ ինձ՝ ընծայողիս հարստանալու, ե՛ւ ձեր՝ լսողների օգուտի համար: Հասել եմ՝ պատմելու Թովմասի մասին, որն սկզբում չհավատալով մեր Քրիչի հարությանը՝ տեսնելով եւ շոշափելով [Նրա վերքերը]՝ «Տե՛ր իմ եւ Աստվա՛ծ իմ» խոստովանեց Նրան:

Բոլորդ միասին ձեր սրտերը դեպի ինձ ուղղեք, հանդարտությամբ լսեք իմ խոսքերը եւ դրանցից օգուտ պտղաբերեք:

Որովհետեւ մեր Քրիչ Հիսուս Քրիստոս խարխլեց դժոխքի ամենակեր որոգայթը, եղավ անդրանիկը մեռելներից եւ փակված դռներով մտավ իր աշակերտների մոտ: Երկվորյակ անվանված Թովմասն այնտեղ նրանց հետ չէր, երբ Հիսուսը եկավ:

Ո՛վ սքանչելիքին: Փափագում էր մեռնել Նրա հետ, եւ ով փափագում էր, հեռու էր: Քաջ Հովիվը հասավ Իր հոտին, իսկ ոչխարները գալթից դուրս էին ու մոլորված: Երկնքի թագավորը մերձենալով՝ եկավ հասավ, իսկ գորավանն աստվածային գորքից հեռու դեգերում էր: Արդյո՞ք թովմասի՝ աշակերտների հետ չլինելը աստվածային տնտեսության խորհուրդ չէր: Որովհետեւ եթե նա նրանց հետ լիներ, չէր երկմտի, եւ եթե չերկմտեր, թերեւս չէր էլ վիճաբանի, եւ եթե չվիճաբաներ, չէ՞ր շոշափի: Կհավատա՞ր արդյոք, եթե չշոշափեր: Եթե չհավատար, թերեւս մեզ էլ չէր ցույց տա այնպե՛ս հավատալ:

Թովմասի անհավատությունը մայրը եղավ մեր հավատի, որի համար էլ մենք, Քրիստոսին չտեսնելով, քարոզում ենք Նրան: Թովմասը, Նրան տեսնելով եւ շոշափելով, երկրպագեց, այդ պատճառով էլ մենք առանց տեսնելու եւ շոշափելու էլեք վերօրինում Նրան:

Երբ Թովմասը եկավ, [մյուս] աշակերտները նրան ասացին. «Տեսանք Տիրոջը: Տեսանք «Երեք օրից հարություն պիտի առնեմ» ասողին, եւ խոսքի ճշմարտությունը գործերից տեսանք: Տեսանք «Ես եմ հարությունը եւ կյանքը» ասողին, քանզի կյանք եւ կյանքի հարություն ստացանք: Տեսանք «Իշխանություն ունեմ դնելու իմ անձը եւ իշխանություն ունեմ կրկին առնելու այն» ասողին եւ Նրա իշխանությունը Նրա գործերից ընդունեցինք:

Մեր Քրիչը հանկարծակի ներս մտավ. ո՛չ թե դուռը բացելով եկավ, իսկ մենք՝ Նրա սքանչելիքի եւ գալստյան պատճառով վայելչապես զարհուրանքս, զարմացանք: Եվ նորագործված տեսանք Նրա ձեռքերը, որոնք ընդունեցին մեխերի հարվածները եւ ջնջեցին մարդկանց մեղքերը:

Տեսանք Նրա ձեռքերը, որոնք խորտակեցին մահը, իսկ Նրա հարությունը տեսան բոլոր մարդիկ: Տեսանք նաեւ Նրա սուրբ կողը, որից արյուն եւ ջուր բխեց»: Թովմասն ասաց. «Դուք բոլորդ տեսաք մեր Տիրոջը, միայն ե՞ս եմ, որ Նրան տեսնելու արժանի չեմ: Մի՞թե ես էլ Նրան այնպես չպատվեցի, ինչպես բոլորդ, մի՞թե բոլորիդ պես ես էլ Նրա կողմից չկանչվեցի, մի՞թե բոլորիդ պես ես էլ խաչված չտեսա Նրան: Արդ, ինչպես ձեզ հետ տեսա տրտմեցնող իրադարձությունները, կամենում եմ տեսնել նաեւ պայծառ բաները: Ինչպես որ տեսա Քրիստոսի մեռնելը, կամենում եմ նաեւ Նրա հարությունը տեսնել: Սակայն մինչեւ Նրա ձեռքերի վրա մեխերի հետքերը չշոշափեմ եւ իմ ձեռքերը Նրա կողի մեջ չխրեմ, չե՛մ հավատա»:

Հապադի՞ր, ո՛վ Թովմաս, քո այդ անհավատության մեջ: Հապադի՞ր, մինչեւ ընդունես հավատը՝ իբրեւ խարիսխ հոգուդ: Հապադի՞ր փոխվել այդպիսի հավատի եւ կտեսնես Յանկալիին:

Սիրո՛ւմ եմ երկմտության խորհուրդը, որը հեռացնում է ամեն մի երկմտություն: Գովո՛ւմ եմ քո քրիստոսասեր օրինակը՝ որպես անհավատության բոլոր վճիռները ջնջող, որպեսզի ես առավել եւս հավատամ, հաստատությամբ փնտրեմ Տիրոջը եւ կոչեմ մոտեցողներին: Որպեսզի քո՝ Նրան փնտրելով ու կոչելով, նաեւ ես իմ Քրիչի գիրկն ընկնեմ:

Թովմասն ասաց. «Եթե չտեսնեմ եւ իմ ձեռքերով [չշոշափեմ Նրա վերքերը], ձեր ասածին չե՛մ հավատա: Որովհետեւ ձեր ասածը իմ ականջին է հավատալ տալիս, սակայն վկա աչքերս են. միայն այն ժամանակ կընդունեմ ձեր խոսքերը եւ կհավատամ սքանչելիքին, երբ մատներս խրեմ նրա մեխերի տեղերը: Ձեռքերով կստուգեմ կողը, որն իսկ համար խոցվեց, եւ այն ժամանակ կերկրպագեմ Նրան, ով մահվանից դեպի ինձ դարձավ»:

Մինչ Թովմասն այս էր ասում իր աշակերտակիցներին, փակված դռների միջով Նրանց մոտ մտավ Հիսուսը: Մտավ կյանքի Դուռը այնպես, ինչպես Ինքը միայն գիտի: Քանի որ ինչպես ծնվեց, եւ չապականվեց կուսության դուռը, այնպես էլ տան ներսում գտնվեց առանց տան փակը հեռացնելու:

Եվ դարձյալ՝ ինչպես մատանիով կնքված գերեզմանից հարությունն առավ, այնպես էլ փակված դռներով ներս մտավ, ինչպես Ինքը կամեցավ: Եվ ոչինչ լարգելեց Նրան, որովհետեւ համայնի Տերը լինելով՝ այստեղ էր. այդպես նաեւ Նրա ծնունդն է ամեն բանում: Սակայն Նրա՝ գերեզմանից դարձը գերազանցո՛ւմ է բոլոր մտքերը: Նմանապես նաեւ Իր աշակերտների մոտ Նրա մուտքն է անճառելի եւ անպատմելի: Քանզի ընկալեցի մտնելը, բայց թե ինչպես մտավ, չսովորեցի: Ո՛չ հասկացա այդ եւ ո՛չ էլ հանդգնում եմ ճառել [այդ մասին]:

Օրինո՛ւմ եմք Մտնողին եւ մտացածին խոսքերով չէնք քննում [թե ինչպես մտավ]: Խորհուրդն եմ քարոզում եւ ո՛չ բացատրելին: Սքանչանում եմ կարարվածով, իսկ թե ինչպես եղավ, չե՛մ փնտրում: Անխոովաբար հավատում եմ գրվածին եւ փրկվում, քանի որ տերնականակն սքանչելիքների մասին լսողն եմ եւ ո՛չ փնտրողը աստվածային ազդեցությունների:

Եթե անհավատներից մեկն ինձ ասի. «Ամբողջովին օտար բան ես քարոզում. ինչպես կարող էր մարմինն անցնել փակ դռնով՝ առանց այն բացելու», ես նրան կասեմ. «Ինչպե՞ս կարողացավ հրեշտակը Ամբակում մարգարեին իջեցնել առյուծների գուբը եւ այնտեղից հանել նրան, իսկ կնիքը, որ փոսի վրա էր դրված, ամբողջական մնաց»: Արդ, ինչպես ծառան արեց, ինչ որ կամեցավ, այնպես էլ Տերն արեց, ինչ որ կամեցավ: Այդպես է լինում Աստծո կամքով, այդպես լինում է մարդացած Բան Աստծո կամքով:

Շարունակելի

Աշխարհաբարի փոխադրեց
Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ
ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ
(1019-1058)

Սկիզբը՝ էջ 3

Եվ այնուհետեւ հանդեսը շարունակվում էր, եւ ճաշի էին նստել, հայտնվեցին Կամենաստի ուղարկած պաշտոնյաները, որոնց կարգադրված էր Պետրոս Գետադարձին կալանել եւ բանտարկել Խաղտոյաձոր բերդում (այժմ՝ Կաղտաձոր): Սա մի անառիկ դղյակ էր Եփրատի աջափնյա շրջանում՝ Ժայռոտ կիրճի մեջ: Այս տեղի ունեցավ 1047 թվականի հունվարի 6-ին: Այս եղավ Պետրոսի դավաճանության վարձը: Կաթողիկոսի հետ գտնվող նրա երկու քեռորդիներից Անանիան անմիջապես ուղարկվեց Կոստանդնուպոլիս, իսկ Անիում գտնվող Խաչիկը բանտարկվեց Սեւքար բերդում: Սակայն շատ չանցած՝ նույն 1047 թվին, կայսեր կարգադրությամբ Պետրոս Գետադարձին տարան Կոստանդնուպոլիս: Որքան էլ կաթողիկոսը դավաճան լիներ, նրա ձերբակալությունը ճնշող ազդեցություն ունեցավ հայերի վրա՝ առաջ բերելով նաեւ գայրույթը կալանքի նկատմամբ: Կացությունը դարձյալ ծանր էր, եւ կայսրը, որ բնավ ձավ վտանգավոր, եւ կայսրը, որ բնավ միտք չուներ նրան ազատ արձակելու, հարմար գտավ նրան պատվավոր արգելքի մեջ պահել մայրաքաղաքում՝ փաստորեն հեռացնելով նրան երկրի ներքին գործերին Գետադարձն այնքան միամիտ չէր, որ չհասկանար իր փաստորեն ձերբակալված լինելը, ուստի իրեն քնորոշ կանխավալ զգուշավորությամբ իրեն փոխանորդ հաստատեց իր կրտսեր քեռորդի Խաչիկին: Այլ խոսքով՝ նա պահեց կաթողիկոսությունը, սակայն լիազոր փոխանորդ նշանակեց, որը կկարողանար նրա բացակայության ժամանակ կաթողիկոսության խնդիրները հոգալ: Ուռհայեցու տեղեկությամբ՝ նա կանխավ պատրաստել էր 400 լիտր մյուռոն, որը երեկաթե ամանների մեջ գաղտնի թաղել տվեց Ախուրյան գետի ձորամիջում՝ քաղաքի դռների հարեւանությամբ, որ հոռոմմերի, այսինքն՝ բյուզանդացիների ձեռքը չընկնի: Սա ցույց է տալիս, որ կաթողիկոսը բյուզանդական կողմնորոշում ուներ քաղաքական, բայց ոչ հավատքի հարցերում: Հավանաբար թաղված մյուռոնն այդպես էլ լույս աշխարհ չբերվեց: Ճոխ հանդեսների սիրահար կաթողիկոսն այդ կապակցությամբ էլ թագավորավայել թափոր կազմակերպեց, որին մասնակցեցին 300 ազատ հեծյալներ, 120 եպիսկոպոսներ, վարդապետներ եւ քահանաներ՝ ջորիներ հեծած, եւ 200-ի չափ սպասավորներ:

Մատթեոս Ուռհայեցին հիշատակում է կաթողիկոսի 17 հետեւորդ եկեղեցականներ, որոնք նշանավոր էին իրենց գիտնականությամբ: Դրանք էին՝ Բուլղար վարդապետը, Խաչատուր դարպասեցը, Թադեոսը, Գեւորգ Քարնեղեցին, Հովհաննես Քարնեղեցին, Մատթեոս Հաղբատացին, Մխիթար Գնայրացին, Տիրանուն Կապաւեցին, Վարդան Սանահնեցին, Բարսեղ Բաշխատացին, Մխիթարիկը, տեր Եղիսեն, տեր Բարցին, Մխիթարիկը, տեր Եղիսեն, տեր Բարսեղը, տեր Գեւորգը, տեր Եփրեմը, տեր Ասեղը, տեր Գեւորգը, տեր Եփրեմը, տեր Անանիան եւ տեր Խաչիկը: Նրանցից Եղիսեն եւ Բարսեղը եղբայրներ էին, որոնք սկզբնապես իմաստասիրություն էին ուսանել Գրիգոր Մագիստրոսի մոտ, սակայն հետո կաթողիկոսը նրանց ձեռնադրել էր եկեղեցական՝ դարձնելով իրեն անբաժան ընկերներ: Կոստանդնուպոլիս գնալու ժամանակ հիշյալ երկուսն արդեն եպիսկոպոսներ էին: Մ. Օրմանյանն անգամ կարծում է, որ կաթողիկոսը ծանոթացել է նրանց դեռեւս Բջնիում իր բանտարկության շրջանում:

Կոստանդնուպոլսում գտնվող հայոց հայրապետն այլեւս մեծ վտանգավորություն չէր ներկայացնում, ուստի նրան ընդունեցին մեծ պատիվներով եւ առատ ոռճիկ նշանակելով: Նրան մեծ փառքով տանում են սուրբ Սոֆիայի տաճար, որտեղ նա հանդիպում է կայսրին եւ պատրիարքին: Հենց այդ օրը նրան մեկ կենդհանր, քին: Հենց այդ օրը նրան մեկ կենդհանր, այն է՝ 100 լիտր արծաթ, ծախսի դրամ տրվեց: Տեղ հասնելու երկրորդ օրը, երբ Պետրոսն այցելեց կայսրին, կայսրը նրան դիմավորեց եւ նստեցրեց ոսկի աթոռին՝ ուսնելով շատ սիրալիր խոսակցություն: Կաթողիկոսի մեկնելու ժամանակ նրա ուղղեցիներից Եղիսե եպիսկոպոսը վերցնում է այն աթոռը, որի վրա Պետրոսը նստել էր եւ չի տալիս, երբ պալատի սպասավորները պահանջում են այն թողնել: Կայսեր այն հարցին, թե Եղիսեն ինչո՞ւ է կամենում աթոռը վերցնել, նա պատասխանում է, որ դա հայրապետական աթոռ է, որի վրա ոչ ոք արժանի չէ նստելու: Հայերի մոտ նման սովորություն եղել է թե ոչ, վկայված չէ: Սակայն, այսպես թե այնպես, կայսրը թույլ տվեց աթոռը վերցնել՝ միայն հեգնաբար ավելացնելով, որ աթոռը 1000 դահեկան արժի, եւ Եղիսեն պետք է այն միշտ իր մոտ պահի, որ դրա վրա մեկ այլ մարդ չնստի: Ըստ առյուրների՝ Պետրոս Գետադարձը մնաց մայրաքաղաքում երեք կամ չորս տարի, որը թերեւս Գ եւ Դ տառերի շփոթի արդյունք է: Հավանական այն է, որ նա Կոստանդնուպոլսում մնաց 1047-ից մինչեւ 1051 թվականը, այսինքն՝ չորս տարի: Կաթողիկոսի փաստորեն կալանված լինելը բացատրվում էր նրանով, որ կայսրը կասկածում էր, թե նա, վերադառնալով Հայաստան, կապստամբեցնի Անին:

Շարունակությունը՝ էջ 6

Կիրակնայ

- Տե՛ր հայր, ի՞նչ կարեւոր, վճռորոշ դեր են խաղում այս երկու հակամետ եւ իրարամերժ երեւույթները յուրաքանչյուր մարդու կյանքում:

- Նախ փորձենք հասկանալ, թե ինչ է անեծքը: Ըստ բացատրական բառարանի՝ «անեծք»-ը ստուգաբանվում է որպես չարախոսություն, չար կամեցողություն: Երկիր մոլորակի վրա առաջին անեծքը դուրս է եկել Աստծու բերանից: Սակայն աստվածային անեծքը խիստ տարբեր է մարդու անեծքից: Երբ Աղամն ու Եվան մեղանչեցին, Աստված անիծեց նրանց եւ Աղամին ասաց. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին» (Ծնն. Գ 17): Անիծեց նաեւ Եվային՝ ասելով. «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները: Ցավերով երեխաներ պիտի ծնես...» (Ծնն. Գ 16): Թեեւ Աստված անիծեց Աղամին, սակայն ասաց, որ երկրին իր պտուղը տա, եւ նա կարո՛ղ է իր քրտինքով վաստակել իր հանապազօրյա հացը: Սա Աստծու ողորմության արտահայտությունն էր: Երկրորդ Օրենքի գրքում ասվում է. «Ա-



ՕՐՇՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԵԾՔ

Մ'եր հրուն է Ջրվեժի Սբ Կաթողիկե եկեղեցու հովիվ Տ. Կյուրեղ քհն. ՏԱՔՅԱՆԸ

Ամենակալ Աստված, ստեղծելով ողջ տիեզերքն ու երկիրը, իմանալի եւ շնչավոր աշխարհը, կենդանիներն ու բույսերը, վերջապես արարեց արարչության պսակին՝ մարդուն, որին արարեց Իր պատկերով եւ նմանությամբ եւ ամեն ինչ պսակեց Իր օրհնությամբ: Աստվածաշունչն ասում է. «Եվ Աստված տեսավ, որ բարի է», այսինքն՝ Աստծու ողջ արարչությունը ցնծում էր օրհնությամբ: Սակայն աստվածային զորության ու փառքի դեմ ըմբոստությունից ու անհնազանդությունից ծնված չարը բազում չարիքներ հետ աշխարհ բերեց նաեւ անեծքը, եւ մարդը, որ բնությամբ բարի էր, իր մեջ կամավորաբար ընդունեց չարիքի սերմերը եւ դրա հետ միասին՝ անեծքը: Եվ այսպիսով, արարչական բարու, աստվածային օրհնության հետ կողք կողքի՝ մարդու մեջ ապրում է, նրա հետ քայլում է չարի սերմանած չար պտուղը՝ անեծքը:

Նիծյալ է այն մարդը, որ կախված է փայտից»: Այս մարգարեական խոսքը վերաբերում է մեր Տիրոջը, քանզի Նա արժանացավ անեծքի մեր պատճառով, սակայն մեր հանդեպ ունեցած Իր սիրո, հոժարության եւ խոնարհության շնորհիվ այդ անեծքը վերածեց օրհնության: Մեր Տիրոջ վրա եկած անեծքն ամենամեծն էր, որը երբեւէ եղել է արարչագործության մեջ: Երկրորդ Օրենքի գրքում բազմաթիվ անեծքներ եւ օրհնություններ կան: Սբ Գիրքն ասում է, որ Աստված «Իր արեգակը ծագեցնում է չարերի եւ բարիների վրա եւ անձրեւ է թափում արդարների եւ մեղավորների վրա» (Մատթ. Ե 45): Աստված անաչառ է, Նրա ողորմությունը թափվում է բոլորի վրա որպես օրհնություն:

- Տե՛ր հայր, Եկեղեցու սուրբ հայրերն ուսուցանում են, որ պետք է լեզվի վրա սանձ դնել, լեզվով պետք է օրհնել Աստծուն, մխիթարել ազավորներին, քաջալերել վհատվածներին...»:

- Սբ Մկրտության ժամանակ, երբ քահանան Դրոշմի խորհուրդն է կատարում, մյուռոնով օծում է մկրտվողի մարմնի տարբեր մասերը, այդ թվում նաեւ բերանը՝ ասելով. «Հրսուս Քրիստոսի անվամբ դրոշմվող կնիքն այս թող լինի քեզ համար պահպանություն բերանի եւ ամուր փական քո շրթունքներին»: Խոսքը, որով օժտված է մարդը, կենդանիներից տարբեր լինելու ամենակարեւոր հատկանիշներից է: Այսօր մեր իրականության մեջ երեխաներն այնքան հեշտությամբ են միմյանց «անասուն» անվանում: Սա ահավոր երեւույթ է. Աստծու պատկերն ու նմանությունն ունեցող մարդուն «անասուն» անվանելով՝ հայհոյում ենք Աստծուն: Սբ Հակոբոս առաքյալն իր ընդհանրական թղթում ասում է. «Լեզուն մի

փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում... Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրավության. մեր անդամների մեջ է հաստատված լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը եւ կրակով վառում մեր ամբողջ կյանքը, բորբոքված գեհենի կրակով... Նրանով օրհնում ենք Տիրոջը եւ հոր եւ նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծվեցին Աստծու նմանությամբ» (Յակ. Գ 5, 6, 9): Եվ հստակ ասում է, որ նույն աղբյուրից չի կարող բխել քաղցր եւ դառը ջուր միաժամանակ: Մարդն այնքա՞ն զգույշ պետք է լինի իր բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքի համար, չէ՞ որ մենք «մեր խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տանք» (Մատթ. ԺԲ 36): Գիտենանք նաեւ, որ խոսքի իր մեջ զորություն է կրում: Մի գրքույկում կարդացի մի ողբերգական դեպքի մասին: Մի կին, որն ուներ 2 երեխա, մեկը՝ չորս տարեկան, իսկ մյուսը՝ նորածին, անընդհատ լաց լինող նորածնի վրա բարկանալով՝ ասում է, որ եթե չդադարի լաց լինելուց, պատուհանից դուրս կնետի նրան: Քիչ ժամանակ անց մանկան լացը դադարում է, եւ երբ մայրը փորձում է պարզել պատճառը, պարզվում է, որ չորս տարեկան երեխան նորածնին դուրս է նետել պատուհանից:

Ցավալի է նաեւ այն, որ ծնողներն իրենց են սովորեցնում իրենց անմեղ երեխաներին հայհոյել եւ ուրախանում են, երբ նրանց բերանից պիղծ խոսքեր են դուրս գալիս: Ծնողներն իրենց երեխաներին դարձնում են հայհոյիչ: Այդ կերպ վարվելով՝ նրանք Աստծու անեծքն են իրենց վրա բերում:

- Տե՛ր հայր, ի՞նչ կասեք այն դեպքերի վերաբերյալ, երբ ծնողներն են իրենց անհնազանդ զավակներին անիծում:

- Ես շատ ընտանիքներ գիտեմ, որտեղ անեծքն է թեւածում: Անիծում են թ'ե իրենց զավակներին, է՛ւ հարեւաններին ու ազգականներին: Միևչդեռ Տերն Ավետարանում ուսուցանում է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարութի՛ւն արեք ձեզ ատողներին եւ աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում» (Մատթ. Ե 44): Ուստի նորից ուզում եմ կրկնել, որ որպես քրիստոնյաներ՝ պարտավոր ենք զգույշ լինել մեր բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքի համար:

- Պողոս Առքիեպիսկոպոսն ասում է, որ «եթե Աստված բարկացող մայրերի բոլոր խնդրանքները կատարեր, նրանցից շատերը նույն օրն իսկ անզավակ կդառնային: ...բայց երբ շատ են նույնը կրկնում, զավակներին բազմիցս վերցնում է աշխարհից՝ որպես պատիժ նրանց ծնողներին...»:

- Ես կավելացնեի՝ «եւ որպես օրհնություն նրանց զավակներին»: Պատկերացրեք մի տուն, որտեղ ամեն օր անեծքներ են հնչում: Այդտեղ այլեւս սիրո մասին խոսք լինել չի կարող: Քրիստոսի խաչվելուց եւ հարությունից հետո այլեւս Աստված մեզ չի անիծում եւ հր արդարությամբ չի մոտեցնում:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ

(1019-1058)

Սկիզբը՝ էջ 5

Լաստիվերտցու այս հաղորդումը պարզորոշ ցույց է տալիս, որ հայրենիքը երեք անգամ վաճառած Պետրոս կաթողիկոսը կասկածելի անձ էր բյուզանդացիների համար: Իր հերթին կաթողիկոսն էլ աշխատում էր վստահելի երեւալ, որպեսզի կարողանա այդ ճանապարհով ազատություն գտնել: Նա հաճախ կայսերական պալատ էր գնում, իսկ պատրիարքը դժվարություններ չէր ստեղծում, երբ հայրապետական գավազանը տանում էին կաթողիկոսի առջեւից, որը գոնե Կոստանդնուպոլսում հույն պատրիարքի հատուկ արտոնությունն էր: Կայսրին այցելելու ժամանակ նրան դիմավորում էին կայսեր կարգադրությամբ պետության մեծավորները: Սակայն այս բոլորով հանդերձ՝ նրան գրկել էին Հայաստանի հետ հաղորդակցվելուց, եւ Խաչիկն ինքնուրույն էր վարում հայրապետանոցի գործերը: Անշուշտ երբեմն-երբեմն նա գաղտնի հրահանգներ էր ստանում կաթողիկոսից:

Կոստանդնուպոլսում գտնվելիս Պետրոս կաթողիկոսը հավանաբար գրում է շաբականներ, որով նպատակ է հետապնդել իր պատվավոր կալանքն ինչ-որ չափով թեթեւացնել գրական աշխատանքներով: Նա դադարում է արծաթասեր լինելուց եւ ուրախանում է իր հոգեւորականությամբ:

Ակնի՝ բյուզանդացիների կողմից գրավվելուց հետո, կարծես, ուղեւորների մի ամբողջ շարք սկսվեց: Եկեղեցաց գավառում ուժեղ երկրաշարժ եղավ, եւ Երզնկան ահավոր ավերածության ենթարկվեց: Շատ մարդիկ անհետ կորան երկրագնդի ճեղքերում: Բայց ավելի զարհուրելի եղավ Տուրոբիի արշավանքը Բյուզանդական Հայաստան: Թշնամին Արճեշում մեծ կոտորած կազմակերպեց եւ գերի ընկած հույն զորավարին՝ Ստեփանին, տանջանքների ենթարկեց եւ այնուհետեւ մարդագերծ արեց: Իբրահիմը էլ Գթլմուշը առաջ շարժվեցին երկրի խորքերը, քանի որ, պատմիչի խոսքերով, հույները հայոց զորքը ցրել էին եւ նեղբինի զորավարները իրենց փորձում պաշտպանել իրենց արեւելյան տիրույթ Հայաստանը: Այնուհետեւ ավերվեցին 24 գավառներ, եւ թշնամին հասավ Բասեն գավառ, եւ երկու շաբաթ դադար առան Վաղարշավանում (իմա՛ Ներկայիս Թյուրքի-քյոյը - Բ. Հ.): Թշնամին այդ ընթացքում ավերում է Բասենի եւ Կարինի գավառները, ինչպես նաեւ Խաղտիքը, Տայքը, Տարոնը, Հաշտյանքը եւ Խորձյանը: Արյունարբու թշնամին հատկապես մեծ կոտորած սարքեց Վանա

նանաղի գավառի Սմբատաբերդում, որտեղ փախստականների մեծ բազմություն էր կուտակվել:

Ավերվեց Արծն քաղաքը, կոտորվեց, եթե հավատանք պատմիչի հաղորդմանը, 150 հազար մարդ, որից 152-ը՝ քահանա: Եկեղեցիների հարստությունը թշնամին տարավ 800 վեցկի սայլերով: Այս դեպքերի ահրթով հիշատակվում է Դավթակ քորեպիսկոպոսը՝ որպես Արծնի ամենահարուստ մարդկանցից մեկը: Արիստակես պատմիչը ահավոր գույներով է ներկայացնում Արծնի կործանումը, կողոպուտն ու բնակչության գերեվարումը, որը տեղի ունեցավ 1048-1049 թվականների միջոցին: Արծնի տեղում հետագայում պահպանվել էր Կարարզ գյուղը (իմա՛ Սեւ Արծն - Բ. Հ.): Արծնից է իր նոր անունն առնում Կարին քաղաքը: Երբ Արծնի փրկված բնակչության խլյակները հաստատվեցին Կարինում, այն ստացավ Արծն կամ Արզն-ար Ռում, այսինքն՝ Հռոմների Արծն, որը հետագայում հնչյունափոխվելով՝ աստիճանաբար վերածվեց Արզրումի, իսկ ավելի ուշ՝ Էրզրումի:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Սկիզբը՝ էջ 4

Մարդու մաքաղաղոծման հարցեր է քննում եւ ստեղծում այսպիսի պատկեր. «Արցունքը սապոն լինի, սեւութիլնը սպիտականայ»:

Գիտունի եւ անգետի հարցին տալիս է իր այս պատասխանը. «Էնց մարդն որ բանիկ ունի, կամ ուսմամբ, կամ ի բնութեան, համեմ է հոգոց մարդկան, 'է գիհանդ հոգիս բզժըշկէ»: Նրա համար լավ մարդը խելոք մարդն է. «Լաւ մարդ եա նոր-նա ասեմ, որ բանայ գրերանքն համով, Ընցգուն լեզուն գին չունի, թէ ու գոռոզ: Այդպես է նաեւ ցորենի հասկը հասուն արտի մէջ: Ակնհայտ է, որ նա ունեցել է հիասթափություններ, ինչի արտահայտությունն է սույն հայրենը.

Հազար եղուկ իմ խելացս, որ հետ քուպիսդն դատեցայ,
Ես ըզքեզ ինձ վարդ գիտցայ՝ փուշ չատես, լուկ անխելացայ,
ԻՆՉ շահ ի յետին խելացս, երբ զաթքին ես անտիրացայ,
Գոհ եմ աստուծոյ բարոյն, որ ի քո տեսոյդ խլըլցաս:



Մարդուն ճանաչելով՝ այդպիսինից ազատագրվելն էլ գոհություն է: Այս մտորումները շարունակվում են նաեւ «Մէկ կայ հազար ածէ, հազար կայ մէկ չածէ», «Ծառ մին կայ հազար ճըղի, գինչ տեսայ նա մէկ տակ ունի», «Է՞ մարդ, որ աւերդ ես հիմըն դրըել ու տուն կու շինես», «Բանիկ մի դալաթ արի, որ զաւնու ձագըն սիրեցի» եւ շատ այլ հայրեններում: Խելքի, գիտության ճանապարհն անընդհատակուտ է, երեկվա փորձը դաս է այսօրվա կյանքի, բայց շատ դեպքում դա արդեն ուշ է լինում. «ԻՆՉ շահ իմ յետին խելացս, երբ առջի անունն ա՛ւրեցի»:

Ըստ նրա՝ գիտուն մարդը լուսատու չատ է, խոսքը «զէտ արեւ ու ծագէ», իսկ անգետ մարդը օձի է նման, որ «հանապազ ըզմարդ կու խոցէ»:

Բանաստեղծն ապրում է աշխարհի ունայնության ողբերգությունը եւ դարձյալ փորձում ելք գտնել այդ վիճակից. «Աշխարհս է ոչինչ նըման, շատ դատտին դառնան փոշիման <...> Ցան արա՛ գործէ բարի, որ յետոյ չլինիս փոշիման»: Պարարտ մարմինը կերակուր է որդերի համար, ուստի մարդը պետք է ազատագրվի մարմնի հողեղեն պատյանից եւ ոգին սի գաղափարով:

Նա մշտապես կոչ է անում հեռու մնալ անիրավ մարդուց, բոլոր նրանցից, ովքեր աշխարհը դարձրել են «մեղաց տուն», որովհետեւ բոլորի համար մազե կամուրջ է կապված՝ արդարը կթռչի կանցնի, մեղավորը՝ «անկանի»:

Մարդու հայտնագործումը եւ մարդու ճանաչողությունը Երզնկացու համար դառնում են նաեւ տակա: Ըստ նրա՝ մարդու մարմինը նավ է, խելքը՝ ծով, միտքը՝ նավավար, «որ բարձեր է գանձ շահաւոր», մնում է, որ այդ անմեծ մարդը ափ հասցնի:

Մարդու կյանքն անկայուն ծովի նման է, քանի որ շրջապատված է անբարո միջավայրով: «Թեդու ի սրտանց քընեսես, այս կեանքս ցաղս երակ խաբող է», - ասում է նա: Անկայուն ծովի նման է նաեւ աշխարհը.

Աշխարհս է ի ծով նըման, ով որ գայ՝ անթաց չմնայ,
Յայս ծովս ես ի՞ւ նա մըտայ, գընաց նաւս ես ես չիմացայ,
Յեզեր մաւոտեցել եմ ես, վախեմ թէ քարի դիպեցայ,
Քանի՞ իմ արուոր շինուածս ու տախտակքս մէկմէկանայ:

Ծովի պատկերը՝ որպես աշխարհի փոխաբերական խորհրդանիշ, հաճախակի հանդիպում է Երզնկացու հայրեններում: Զմոռանանք, որ այս պատկերն իր զարգացման ճանապարհն է անցել Սաշտոցից մինչեւ Նարեկացի եւ հիմա, ահա, տարբեր հաճախաբերով հանդիպում է հետեւյալ տողերի մեջ. «Աշխարհս է ի ծով նըման, ու մարդիքն ի ներս կու լողան, Մարմինն է ի նաւ նըման, հոգին գանձ է անապական»:

Իր մարդաորոնումների մեջ Երզնկացին հանգում է Աստծու գաղափարին՝ կատարյալին, բարձրագույնին: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է հավատի հիմքերը շատ ամուր դնել: Այս մտայնությունը տարբեր անդրադարձներով արծարծված է «Տեսայ իմ հոգույս հոգին, որ մեռաւ ի հող թաղեցաւ, Դարձեալ իմ սիրուս հաւար նա հարեաւ եւ շատ դատեցաւ...» տաղում: Արդար դատավոր Աստված արդար դատաստան պիտի անի բոլորի համար,- սա է անեղ դատաստանի օրվա սպասումը, եւ այդ հույսով նա շարունակում է ապաշխարել. «Այ, խիստ անարժան եմ ես, որ բարեաց մէկ մյուս մի լինիմ, Խընդրեմ ի ձենց պիրելիք, որ ասէք մէկ Հայր մեր յերկինս»:

Հոգիանկես Երզնկացու հայրենների մեջ առկա է նաեւ ապդդտության մոտիվը: Պատկերներն ու գաղափարները շեշտերը շատ ընդհանուր է նման են համանման հայրեններին.

Ով որ աւտարին վատ ասէ, նա ինքն այլ դարիպ լինենայ,
Երթայ ի յաւտար երկիր, զդարիպին զաղորդին գիտեցեայ,
Դարիպն ի յաւտար երկիր, թէ աւսկի թաթան գայ նարայ,
Ի յիւր սիրելեացն ի զատ այն ոսկին մոխիր չարժեցեայ:

Շարունակելի

Դավիթ ԱԼԱՄԻՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԿՈՍ ՀԳԵԼՎՈՐ
(Ե դպիր)

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՄՎԵՑ ԽՈՍՔ ՆՐԿՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ, ԹԵ ԳՈՐԾԵՐՈՎ ԵՆ ԱՐԴԱՐԱՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 4

93. Եթե մենք Քրիստոսի պատվիրանները կատարենք համաձայն մեր խղճի, հոգեպես կթարմանանք այն չափով, որով զանգվում ենք մեր սրտում: Սակայն ամեն ինչ իր ճիշտ ժամանակին է գալիս մեզ մոտ:

94. Հարգանքորեն աղոթիր ամեն ինչի համար՝ և նրբեռ ոչինչ չեմ անի առանց Աստծո օգնության:

95. Ոչինչ ավելի զորեղ չէ, քան աղոթքն իր կարգարնա ժամանակ, և ոչինչ ավելի արդյունավետ չէ Աստծո հաճությունը շահելու համար:

96. Աղոթքը բովանդակում է պատվիրանների լիակատար պահպանումը, որովհետև ոչինչ ավելի բարձր չէ, քան Աստծո հանդեպ սեր:

97. Անգրաղ աղոթքը նշան է Աստծո հանդեպ սիրո, իսկ անուշադիրն ու ցրվածը՝ հաճույքի:

98. Ով առանց լարվելու կարդանում է աղթուն մնալ, համբերատար լինել և աղոթել, հայտնապես Սուրբ Հոգուն հաղորդակից անձ է: Իսկ ով սրանք կարատերեմ լարվում է, սակայն կամովին դիմանում է, նույնպես արագապես օգնություն է գտնում:

99. Պատվիրանների մեջ մեկը մյուսից բարձր է, ուստի և հավատքի մեջ մի ասփիճան ավելի հասարատապես է հիմնված, քան մյուսը:

100. Կա հավատ, որ ծնվում է լսելու ճանապարհով (Հռոմ. Ժ 17), և կա՝ որ «հուսացված բաների հաստատությունն է» (Երբ. ԺԱ 1):

101. Հարցնողներին խոսքով օգնելը լավ է, սակայն ավելի լավ է աղոթքով և առաքինությունդ գործելով նրանց գործակցել: Որովհետև ով այսպիսի միջոցներով է իրեն նվիրում Աստծուն, ընկերոջն օգնելու հետ օգնում է նաև իրեն:

102. Եթե կամենում ես սակավ խոսքերով օգուտ գալ նրան, ով փափագում է սովորել, խոսիր նրա հետ աղոթքի, ճշմարիտ հավատքի և պատահելիք ամեն ինչ համբերությամբ տանելու մասին: Որովհետև սրանց միջոցով է ձեռք բերվում մնացած ամեն ինչ, որ բարի է:

103. Մի անգամ որ ինչ-որ բանի համար մեր հույսն Աստծո վրա դրեցինք, այլևս դրա համար չենք վիճում մեր ընկերոջ հետ:

104. Եթե, ինչպես ուսուցանում է Սուրբ Գիրքը, ամեն ոչ կամավոր բան իբրև պատճառ ունի կամավորը, ապա մարդն իրենից ավելի մեծ թշնամի չունի:

105. Բոլոր չարիքների մեջ առաջինը զգիտությունն է, հաջորդը՝ անհավատությունը:

106. Փորձությունից փախիր հաբերությամբ և աղոթքով: Եթե փորձությանը դիմադրես առանց սրանց, այն միայն էլ ավելի ուժգնորեն կհարձակվի վրադ:

107. Ով հեզ է Աստծո աչքին, իմաստուններից էլ իմաստուն է, և ով սրտով խոնարհ է, ուժեղից էլ ուժեղ է: Որովհետև սրանք Քրիստոսի լուծը կրում են հոգևոր գիտությամբ:

108. Այն ամենը, որ առանց աղոթքի ենք ասում կամ անում, հետդառնում է անվստահելի կամ վնասակար, ուստի և խայտառակում մեզ առանց մեր դա հասկանալու:

109. Միայն Մեկն է գործերում, խոսքերում և խորհուրդներում արդար: Սակայն շատերն են արդար դառնում հավատով, շնորհով և ապաշխարությամբ:

110. Զոհացողը չի կարող բարձրամիտ լինել, ինչպես որ գիտակցաբար մեղանչողը՝ խոնարհամիտ:

111. Խոնարհությունը ոչ թե սեփական խիղճը դատապարտելն է, այլ Աստծո շնորհն ու գթությունը ճանաչելը:

112. Ինչ որ գոնեն է օդի համար, նույնը միտքն է ապրվածային շնորհի համար: Որքան ավելի ազատվես նյութականությունից, այնքան առվելի ներս կտրնեն օդն ու շնորհը, և որքան ավելի աճեցնես նյութականությունը, այնքան ավելի կհեռանան նրանք:

113. Նյութականությունը գան պարագայում կան-կարասին ու կերակուրն է, իսկ մտքի պարագայում անձնահաճությունն ու զգայական հաճույքը:

114. Ընդարձակ սենյակը սրտում ցույց է տալիս առ Աստված հույսը, իսկ գերլեպվածությունը՝ մարմնական հոգսը:

115. Հոգու շնորհը մեկն է և անփոփոխելի, սակայն գործում է մեզանից յուրաքանչյուրի մեջ, ինչպես կամենում է (գր. Ա Կոր. ԺԲ 11):

116. Երբ երկրի վրա անձրև է թափվում, կենդանությունն է պարգևում յուրաքանչյուր բույսի մեջ առկա որակին՝ քաղցր բույսերի մեջ՝ քաղցրությանը, կպչունեցնի մեջ՝ կպչունությանը: Այդպես էլ երբ շնորհի է թափվում հավատացյալների սրտերին, յուրաքանչյուրի փալիս է գարբեր առաքինություններին պարշտաճող գորությունները՝ իրեն անփոփոխ մնալով:

117. Քրիստոսի քաղցն ունեցողի համար շնորհը կերակուր է, ծարավի համար՝ թարմացնող ըմպելիք, միսոդի համար՝ հագուստ, հոգնածի համար՝ հանգիստ, աղոթողի համար՝ ապահովություն, ողբացողի համար՝ մխիթարություն:

118. Երբ լսում ես, որ Սուրբ Գիրքը Սուրբ Հոգու մասին ասում է, թե «իջավ» առաքյալների (Գործք Բ 3) կամ մարգարեի (Ա Թագ. ԺԱ 6) վրա, կամ «ներգործում է» (Ա Կոր. ԺԲ 11), կամ «վշրանում է» (Եփես. Դ 30), կամ «մարում է» (Ա Թես. Ե 19), կամ «վրդովվում է» (Ես. ԿԳ 10), դարձյալ՝ որ ոմանք «երանայրիքն ուներ» (Հռոմ. Ը 23), իսկ ուրիշներն էլ «լցվում են Սուրբ Հոգով» (Գործք Բ 4), մի՛ կարծիր, թե Հոգին ենթակա է ինչ-որ բաժանման, փարբերակման կամ փոփոխության: Այլ վստահ եղիր, որ, ինչպես նկարագրեցինք, Նա անփոփոխ և ամենազոր է: Ուստի իր բոլոր գորություններում Նա մնում է ինչ որ կա և ասարվածայնորեն փալիս յուրաքանչյուրին ինչ որ անհրաժեշտ է: Մարդվածների վրա Նա թափում է Իրեն ամբողջությամբ, ինչպես արևը, և մեզանից յուրաքանչյուրը Նրանից լուսավորվում է այնքանով, որքանով ապում է մեզ խավարեցնող կրքերը և ազատվում նրանցից: Բայց քանի դեռ սիրում ենք դրանք և դրանցով շարժվում, մնում ենք խավարի մեջ:



119. Ով ապում է կրքերը, ազատվում է դրանց պատճառներից: Իսկ ով գրավվում է դրանց պատճառներով, ենթարկվում է կրքերի հարձակմանը, եթե նույնիսկ ինքը չի ուզում դա:

120. Երբ չար խորհուրդները ճանաչենք գործում են մեր մեջ, մենք պետք է ինքներս մեզ մեղադրենք և ոչ թե աղամական մեղքը:

121. Չար խորհուրդների արմատներն ակնհայտ մեղքերն են, որոնք մենք պահում ենք՝ ջանալով արդարացնել դրանք մեր խոսքերով ու գործերով:

122. Մենք չենք կարող որևէ կիրք ընդունել մեր մտքի մեջ, եթե չենք սիրում դրա պատճառները:

123. Որովհետև ո՞ր մարդը, ով ամոթ կրելուց բնավ չի անհանգստանում, կընդունի անձնահաճության խորհուրդներ: Կամ ո՞վ է, որ անարգանքը սիրով է ընդունում, բայց անպատվությունից նեղվում է: Եվ ո՞վ է, որ փշրված ու զղջացող սիրտ ունի, սակայն մարմնական հաճույքով է զարվում: Կամ ո՞վ է, որ իր հույսը Քրիստոսի վրա է դնում, սակայն անցողիկ բաների համար անհանգստանում կամ վիճում է:

124. Եթե մարդ անարգվում է մի ուրիշից, սակայն բարկությամբ չի պատասխանում խոսքով կամ խորհրդով, սա ցույց է տալիս, որ նա ձեռք է բերել իրական գիտություն և Հիրոց հանդեպ ամոթ հավատ:

125. «Սուրբ են մարդկանց որոները և իրենց կշռով մեղանչում են» (Սաղմ. ԿԱ 9), սակայն Աստված յուրաքանչյուրին փալիս է այն, ինչ արժան է:

Շարունակելի

Անգերեզեից թարգմանեց
Ս. ՍՏԱՓԱՆՅԱՆԸ



ՕՐՇՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԵԾՔ

Մեր հոդվածն է Ֆրանսիի Սբ Կաթողիկե եկեղեցու հովիվ Տ. Կյոդրեդ քհն. ՏԱՔՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 6

Աստված այնքան ողորմած, համբերող է մեղավորներիս նկատմամբ, մշտապես փորձում է մեզ խրատել, սթափեցնել, արթնացնել, իսկ մենք՝ մեզ վերադարձով դատավորի դերը, անիծում ենք միմյանց, որը յուրահատուկ դատապարտություն է:

- Փորձենք հասկանալ՝ ինչի՞ց է ծնվում անիծելու ցանկությունը:

- Սբ Գիրքն ասում է, որ «ոչ թե՝ ինչ որ բերանով է մտնում, ա՛յն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից՝ ա՛յն է պղծում մարդուն» (Մատթ. ԺԵ 11): Անիծելու ցանկությունը մարդու մեջ ծնվում է սրտի չարությունից. Աստծու երկյուղի բացակայության հետեւանքով եւ այլ պատճառներով:

- Հաճախ կսկիծն է լինում պատճառը, օրինակ՝ սաստիկ սուգը, սիրելիի մահը, որի հետեւանքով մարդիկ ոժգոհում են, հայհոյում Աստծուն: Ի՞նչ կասեք այս առիթով:

- Սա նշանակում է բնավ չճանաչել Աստծուն, չհավատալ փրկագործությանը, հավիտենական կյանքին եւ ամեն ինչ չաափել ժամանակավոր կյանքի չափանիշներով: Թող հիշեն բոլորը՝ մեծահասակները եւ երիտասարդները. անեծքն Աստծու կողմից անընդունելի է, իսկ անիծողները մի օր ի՞նչեց անեծքի պտուղները պիտի քաղեն:

- Տե՛ր հայր, երբեմն ակամա ունկնդիր ենք դառնում չարախոսությունների, անեծքների, հայհոյանքների: Ի՞նչ պետք է անել նման դեպքերում, երբ չեմ կարող սաստել, հանդիսանել:

- Քրիստոնյա մարդն այդպիսի բաների առջեւ պետք է իր ականջները փակի: Սբ Ս. Շնորհալին «Հավատով խոստովանիմ»-ի Թ աղոթքում, որը վերաբերում է զգայարաններին, խնդրում է Աստծուն իրեն զերծ պահել աչքերի արատասիրությունից, ականջների ախորժալուրությունից, ստախոսությունից, չարը խորհելուց եւ այլն: Պետք է աղոթենք, որ Աստված մեզ զերծ պահի նման բաներից:

- Հաճախ ենք կրկնում, որ Հայաստանն օրհնված է, ի վերջո, Աստվածաշնչի լեռան՝ Արարատի հայրենիքն է այն: Այսօր ինչո՞վ ենք ավելացնում կամ պակասեցնում այդ օրհնությունը:

- Այսօր մենք պակասեցնում ենք օրհնությունը մեր երկրից: Ոչնչացնում ենք անտառները, երկիրն աղբանոցի ենք վերածել, մի՞թե սա անեծք չէ: Մենք պակասեցնում ենք օրհնությունը եւ ավելացնում անեծքը: Երբ ես հույսս դնում եմ ինձ վրա, արդեն իսկ անիծված եմ, մինչդեռ Երմիա մարգարեն ասում է. «Թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տեր նրա հույսը կդառնա» (Երեմ. ԺԷ 7):

Կոչ եմ անում խորապես քննել մեզ վրա հասած դժվարությունների, նեղությունների պատճառները, այդ դեպքում միայն շատ բացասական բաներ մեր մեջ կհայտնաբերեք եւ պայքարելով դրանց դեմ՝ կկարողանանք արժանանալ Աստծու օրհնությանը, որովհետեւ Աստված ողորմած Հայր է:

Յուրքնկալեց
Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Մաս Գ

Սկիզբը՝ թիվ 16-18, 23

Մարդուն (ոչ նրա պատահական մտքերին, ցանկություններին ու բուլությունների) ծառայելն այդ մարդուց կախվածության ամենաազնիվ ու վսեմ կերպն է: Մենք աշխարհում երբեք անկախ չենք լինում: Նույնիսկ շրջապատի հանդեպ վերին աստիճանի ատելությունը միջշեռկան «պերմարդու» մասին պատմությունը, աշխարի չէր գա, եթե չլիներ հեղինակի եւ լսողների այդ «շրջապատը»...

Մարդկանցից կախվածությունը՝ ծառայելով նրանց բոլոր ձեւերով ու կյանքի բոլոր ճանապարհներին, Աստծո ու հավիտենության մեջ մարդու իսկական փառքի ուղին է: «Ո՛չ մեզ, ո՛չ մեզ, Տե՛ր, այլ Քո անվանը տուր փառք» (Սաղմ. ՃԺԳ 1). ահա՝ մարդկային ճշմարիտ փառքի ուղին: Ինչի՞ց կարող է վախենալ մարդն այդման: Իր ճկատմամբ ուրիշների ամհարպալից ցանկացած վերաբերմունք, նույնիսկ անպատվություն, նա կընդունի մարդու ու հեգարարո խղճով ուժերի ներածին չափով ու անկեղծորեն բոլորին ծառայելու ճանապարհներին: Ապրելով աշխարհում այդ մարդն ազատ է առաջին ու գլխավոր գայթակղությունից՝ ողորմելի ու ոչ ճշմարիտ փառքի ճկատմամբ սիրուց:

Այդ փառքի որոնումը կարելի է գտնել շատ մարդկանց շուրթերին եւ աչքերում: Երկրային կարճ կյանքի ընթացքում մարդիկ իրենց ոգեղորում են այդ փառքի թմբադեղով: «Ողոցը լիքող շուներ հաճույք է ստանում սեփական արյան համով՝ չհավանալով այն ողջ կնաստ, որ պատմառում է ինքն իրեն»,- այսպես է բացատրում Հովհաննես Սանրուրդն այն վնասը, որ մարդիկ բերում են իրենք իրենց՝ փափագելով ոչ ճշմարիտ փառքն այս աշխարհում՝ մոռանալով լոկ Աստծոց տրվող իրենց իրական փառքի մասին: Հոգետո, կրոնական ոլորտում եւս մարդը զեղծ չէ այդ փառքի ու դրա հետ կապված վախերի փորձությունից: Այստեղ՝ ամենաարձր արժեքների ապաբերում, փառասիրության ոգին կարող է ձեռք բերել առանձնական նուրբ ու անսպասելի վտանգավոր արտահայտություն: Տեր Հիսուս Քրիստոսի շուրթերից մշտապես հնչած «ներքեւում նստելու» զգուշացումները՝ օրենսգետներին ու փարիսեցիներին, ցույց են տալիս, որ հոգեւոր ինքնագովասում, ոչ պակաս, բան մյուսներում, մարդը կարող է հեշտությամբ գտնել կրկնակ իր սնամանությամբ «ես»-ին եւ վախենալ, որ այդ «ես»-ի անհագ բնությունը կմա բաղցած ու ապրատ: «Իր առջեւից թմբկահարելը», հրվելը իր կողմից հորինված կամ աշխարհից շնորհված փառքով, հատուկ է ոչ միայն կայսրերին, մարշալներին, բաղաքագետներին ու արվեստագետներին: «Փտության» ամենամուրբ փառքը հետապնդում է Եկեղեցու սպասավորներին, Աստծո ծառաներին՝ նրանց ճանապարհներին... Առաքյալներ Հակոբոսի եւ Հովհաննեսի մայր

ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՏ-ՖՐԱՆՖԻՍԿԻ (ՇԱՀՈՎԱԿՈՅ)

Սողոմեն վախենում էր, որ իր որդիները Աստծո արքայության մեջ բավականաչափ բարձր (երկրային հասկացողությամբ) փառք չեն ստանա: Երկրպագելով Փրկչին՝ նա խնդրում էր Նրանից իր որդիներին տեղ հատկացնել Իր աջ ու ձախ կողմերում, երբ գա Իր արքայությունը: «Չեք իմանում՝ ինչ եք խնդրում»,- եղավ Փրկչի պատասխանը՝ ոչ միայն նրան ու Իր աշակերտներին, այլեւ բոլոր մարդկանց, ովքեր վախենում են այս աշխարհում ուրիշների առջեւ չփառավորվելուց:

Մյուս ենթա-սերը, որ դիվային վախ է ծնում, հարստություն, փողի, ինչքի, իրի հանդեպ կիրքն է: «Բոլոր չարիքների արմատը արծաթասիրությունն է» (Պողոս առաքյալ), այլ կերպ ասած՝ նյութական անհագ փափագը: Այստեղ ծնունդ է առնում ամենասուր վախերից մեկը, որ բզկտում է մարդկությանը՝ կորցնելու կամ ձեռք չբերելու վախը: Սա ծնվում է հոգու համար մահացու վտանգության ու ագահության զգայունմներից: Ժլատները սարսափում են կորցնել այն, ինչ ունեն. դրա համար էլ վախենում են իրենց առժամանակյա ունեցվածքը կիսելուց: Ագահները սարսափում են հարստանալու հնարավորությունը, առիթն ու ժամանակը չօգտագործելուց: «Ժամանակը փող է»-ն ագահի նշանաբանն է՝ գրված նրա դեմքին, նրա գրասենյակի պատին: Նա չի հասկանում, որ ոչ թե ժամանակն է փող, այլ փողն է խտացված, բյուրեղացված ժամանակը, որ բազմապատկվում է մարդու ձեռքին՝ այն լավագույն կերպով Աստծուն ու մերձավորին նվիրաբերելու համար: Ողորմածության միջոցով հարուստը բազմապատկում է իր ողորքների, իր բարությանն, Աստծուն հավատարմության ժամանակը: Սիրո միջոցով նյութական արժեքը դառնում է նաեւ հոգեւոր արժեք: Անվախճան ժամանակը բանկ է փողից, եւ փողն արժեք է ունենում լոկ նրա համար, ով գիտի ժամանակի հոգեւոր գաղտնիքը: Բարին կկանենար ողջ դրամը վերածել սիրո, դրանով բազմապատկել սիրո ժամանակը: Իսկ չարը կամենում է երկրային ողջ ժամանակը, որ տրված է մարդկանց Քրիստոսի սիրո ավելացման համար, դարձնել դրամ: Այդ պատճառով էլ Նախախնամությունն այնպես է կարգավորել աշխարհը, որ երբ մարդկանց կողմից բարությանն ու սիրո չփոխակերպված փողը չափից դուրս շատանում է, կորցնում է իր արժեքը, եւ տեղի է ունենում, այսպես կոչված, «դեվալվացիա»՝ դրամի սղում, եւ ժամանակն ազատագրվում է սիրո համար: Սակայն մարդիկ կրկին վազում են ժամանակը դրամով փոխելու՝ կրկին ու կրկին վախենալով «ժամանակը բաց թողնելուց»: Մարդկությունը, փողի՝ այդ «կեցության ուրվականների» ետեւից ընկած, պտտվում է, վազում, սուրում՝ սարսափելով, որ չի հասցնի ձեռք գցել մեծ բանակով ուրվականներ... Պատերազմներն աշխարհում տեղի են ունենում շահի համար, այն ձեռքից բաց թողնելու կամ ձեռք չբերելու վախից: Պատերազմներն այդ վախի ծնունդն են: Պատերազմն ավելի շատ վախի գործ է, քան անվախության ու բարության: Պատերազմների պատճառներն արմատավորված են ժողովուրդների մեստամաֆիզիկական վախի մեջ, որից նրանք ուզում են պաշտպանվել պատերազմի բաջությամբ: Իրականն եւ կամ կարծեցյալ վտանգի վախը նույնպես տանում է արյունահեղության, ինչպես հուսահատության վախը՝ պատմության խավարի առաջ՝ զրկված Հավիտենության լույսից:

Հին «ոսկե ցիկլը», ընդունելով առավել «ջրիկ», ներկայումս նույնիսկ անտեսանելի «ատոմական» ձեւ, սարսափի է մատնում երկրներն ու աշխարհամասերը նրանց հանդեպ իր անգթությամբ եւ հանում մեկին մյուսի դեմ:

Տեխնիկան արագացնում է նյութական արժեքների արտադրությունը՝ արագացնելով նաեւ դրանք ոչնչացնելու գործընթացը: Նյութականի օձը խժռում է իր պոչը: Ամբոխները, այն նյութական արժեքներին ուղղված ժամանակի բրոնոսը ոչնչացնում է իր երեխաներին: Կյանքի բարձրագույն իմաստով չհավասարակշռված ու չամրապնդված քաղաքակրթությունը մարդկությանը տանում է կործանման, էլ ավելի բարդացնում, դժվարին դարձնում ու սնանկացնում սեփական աշխարհը: Քրիստոսի Մարմնին ու Արյանը հաղորդվել չցանկացող մարդկությունը խժռում է իր սեփական մարմինն ու խմում իր արյունը:

Մարդիկ վախենում են ճշմարիտ մարգարեներից, ովքեր ցանկանում են կտրել նրանց ինքնամարդակերությունից, եւ դեպի իրենց են կանչում կեղծ մարգարեների ու առաջնորդների՝ իրենց վրա ողջ իշխանությունը տալով նրանց:

Հարուստները վախենում են աղքատանալուց, աղքատները՝ հարուստներից ունեցվածքը հափշտակելու հարմար ժամանակը բաց թողնելուց: Եթե գանձեր են կուտակվել, մարդը վախենում է՝ չիմանալով ուր բաց ցնել դրանք. տունը կարող է այրվել, հողը՝ բռնազբաղվել, բանձեռոմսերը արժեզրկվել, բանկը սնանկանալ, հրակայուն տուփը՝ ջարդվել: Ոչ մի տեղ եւ ոչ մի բանում վստահություն չկա: Ավելին՝ անմեր կատարյալ անվստահություն է կամ էլ անկասկած ամի... Ինչպես վիրավոր գազան՝ մարդկությունը այստեղ-այնտեղ է վազում իր ռմրակոծությունների դղրդյունների տակ, իր հրդեհների ցոլքերի մեջ...

Ամեն ինչ փլուզվում ու կորչում է: Նյութական տունը եւ հոգեկան տունը, կառուցված Աստվածային Կյանքի հանդեպ անաչառությամբ, ակամանքների ախորժալուրությունից, ստախոսությունից, չարը խորհելուց եւ այլն: Պետք է աղոթենք, որ Աստված մեզ զերծ պահի նման բաներից:

- Հաճախ ենք կրկնում, որ Հայաստանն օրհնված է, ի վերջո, Աստվածաշնչի լեռան՝ Արարատի հայրենիքն է այն: Այսօր ինչո՞վ ենք ավելացնում կամ պակասեցնում այդ օրհնությունը:

- Այսօր մենք պակասեցնում ենք օրհնությունը մեր երկրից: Ոչնչացնում ենք անտառները, երկիրն աղբանոցի ենք վերածել, մի՞թե սա անեծք չէ: Մենք պակասեցնում ենք օրհնությունը եւ ավելացնում անեծքը: Երբ ես հույսս դնում եմ ինձ վրա, արդեն իսկ անիծված եմ, մինչդեռ Երմիա մարգարեն ասում է. «Թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տեր նրա հույսը կդառնա» (Երեմ. ԺԷ 7):

Կոչ եմ անում խորապես քննել մեզ վրա հասած դժվարությունների, նեղությունների պատճառները, այդ դեպքում միայն շատ բացասական բաներ մեր մեջ կհայտնաբերեք եւ պայքարելով դրանց դեմ՝ կկարողանանք արժանանալ Աստծու օրհնությանը, որովհետեւ Աստված ողորմած Հայր է:

Յուրքնկալեց
Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Մենության Հոգեվարք



հավատության ավազների վրա, վերածվում են աղրի...

«Իմը միայն այն է, ինչ ես տվեցի» (Մաքսիմոս Խոստովանող). այս իմաստությունը, որ բացահայտում է անմահությունը, խորը է աշխարիի ոգուն: Աշխարհը շարունակ իր «մարգարեների» եւ «իմաստուններ»ի շուրթերով ասում է ու ասում. «Իմը միայն այն է, ինչ ես չտվեցի» եւ կամ՝ այն, «ինչ ես վերցրի ուրիշից»: Եվ յուրաքանչյուր սերունդ շարունակում է նորովի հավատալ յուրաքանչյուր մարդու մահով անդադար հերքվող այդ «ճշմարտությանը»: Մարդը ջղաձգորեն թաքցնում է իր անպտուղ իրը, իր աղրը, բայց այդ անպտղությունը, այդ աղրը խլվում է նրա ձեռքից եւ ոչնչանում: Կյանքը վախճան է գտնում մոխրով, ցեցով, ժանկով, փտմամբ, բայրայմամբ, դաժան իշխանությունների տեսարիներով:

Շարունակելի
Թարգմանությունը՝ Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լուսավական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
Ս. Էջմիածնի ԶԿ եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
ք. Վաղարշապատ, ԶԿ

Հեռախոս՝
(0+231) 54510
Ստորագրված է՝ 30. 12. 2005 թ.

Տպաքանակը՝ 2500
Գինը՝ 50 դրամ